«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

«Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ ԳՊԲՔ, ՄՈՒՀ կամ Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ. -ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....10

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....10

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....17

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....19

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....23

IVՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....28

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....31

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....34

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....36

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....39

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....41

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....44

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....47

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....48

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....49

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....51

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....53

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....54

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....55

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը նկատի է ունեցել, որ Գյումրու պետական բժշկական քոլեջի առաքելությունը գիտելիքի փոխանցումն ու տարածումն է, արդի աշխատաշուկայի պահանջներին բավարարող բուժքույրերի, մանկաբարձների, դեղագործների և ատամնատեխնիկների դասական մոդելի ձևավորումը: Քոլեջի զարգացման քաղաքականությունը միտված է «հիվանդի խնամք և բնակչության բարձրորակ առաջնային բուժօգնություն ապահովող» շրջանավարտների պատրաստմանը: Գնահատելի է, որ ՌԾ-ով սահմանված ռազմավարական հիմնախնդիրները ներառում են քոլեջի գործունեության ողջ շրջանակը, մասնավորապես՝ շենքային և տեխնիկական պայմանների բարելավում, կրթական ծրագրերի վերափոխում, ներքին որակի ապահովման համակարգի կատարելագործում, կառավարման արդյունավետության բարձրացում և այլն: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դրանք ճանաչելի են ներքին և արտաքին շահակիցների կողմից, քոլեջում իրականացվող բոլոր գործընթացները տրամաբանական հաջորդականության մեջ են, և քոլեջի առաքելությունն ու իրականացրած քաղաքականությունը ներդաշնակ են: Գովարժան է, որ ՌԾ-ով սահմանված գործողությունները ներառված են տնօրենի և ստորաբաժանումների աշխատանքային պլաններում, դրանց արդյունքները մասամբ ներկայացված են համապատասխան տարեկան հաշվետվություններում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբն իր անհանգստությունն է ներկայացնում առ այն, որ ՌԾ-ի արդյունքների գնահատման ցուցիչները բացակայում են, հետևաբար ՌԾ-ն չի կարող գնահատվել:

Գյումրու պետական բժշկական քոլեջն իրականացնում է տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին համահունչ բժշկության ոլորտի 4 միջին մասնագիտության կրթական ծրագիր: Հարկ է նշել, որ քոլեջը պետական լիազոր մարմնին դիմել է «Բուժական կոսմետոլոգիա» ՄԿԾ ներդնելու համար, սակայն, հաշվի առնելով քոլեջի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան, ԿԳՄՍ նախարարությունը մասնագիտությունն իրականացնելու լիցենզիա չի տրամադրել: Փորձագիտական խումբն ունի այն մտավախությունը, որ առանց շենքային պայմանների և ռեսուրսային բազայի բարելավման, քոլեջը հնարավորություն չի ունենա առաջիկայում նոր ՄԿԾ-ներ ներդնել և բարձրացնել մասնագիտական գրավչությունը: Ողջունելի է, որ քոլեջում կիրառվում են դասավանդման ինտերակտիվ և ուսանողակենտրոն մեթոդներ՝ միտված թիմային, խնդրակենտրոն, արդյունքահենք ուսուցմանը և կարևորվում է գործնական հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը: Ինչ վերաբերում է քոլեջում գործող գնահատման քաղաքականությանը, ապա վերջնարդյունքների գնահատման համար տարբեր դասախոսներ տարբեր մեթոդներ են կիրառում: Դրանք միտված են վերջնարդյունքների ձեռքբերմանը: Սակայն փորձագիտական խմբի կարծիքով գնահատման միասնական քաղաքականության ներդրման անհրաժեշտություն կա, ինչը էականորեն կարող է բարելավել գնահատման համակարգը:

Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ դիտարկվող 3 ՄԿԾ-ներում գործնական պարապմունքների գերակշիռ մասը, որոշ դասախոսություններ ու բոլոր պրակտիկաներն իրականացվում են տարածաշրջանի առաջատար բուժհաստատություններում, ինչն ուղղակիորեն փաստում է կիրառական հմտությունների կարևորման և աշխատանքի վրա հիմնված ուսուցման իրականացման մասին: Բացի այդ, փորձագիտական խումբը գովարժան է համարում տրամադրվող առաջադրանքների ու ռեֆերատների ստեղծագործական/հետազոտական բաղադրիչով ապահավվածությունը, ինչը խթանել է ուսանողների հետազոտական կարողությունների զարգացումը: Նշյալի համատեքստում հարկ է ավելացնել, որ վերջին տարիներին ավելացվել են գործատուների բազաներում կազմակերպվող գործնական պարապմունքներին հատկացված ժամերը՝ հնարավորություն տալով ուսանողների կրթության հիմքում դնել իրական դեպքերի ուսումնասիրությունը, հիվանդների հետ աշխատանքը՝ զարգացնելով կլինիկական հմտությունները:

Քոլեջի ուժեղ կողմերից է, որ ՊԴ կազմի շուրջ կեսը բժիշկ-դասախոսներ են՝ ուսանողներին գործնական հմտություններ են փոխանցելով նաև իրենց աշխատանքի վայրերում, ինչն ամրապնդում է քոլեջ-գործատու արդյունավետ համագործակցությունը: Դրական է, որ քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող դասախոսներ, քոլեջը որդեգրել է ՊԴ կազմի աստիճանական երիտասարդացման քաղաքականություն, ինչն ուղղակիորեն դրական է անդրադարձել կրթական գործընթացների արդյունավետության վրա: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների համար մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը կկատարելագործի դասախոսների մասնագիտական հմտությունները:

Խնդրահարույց է, որ ԳՊԲՔ-ի շենքի ընդհանուր տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, առկա է շինության սեյսմազինվածության բարձրացման խնդիր և քոլեջում անվտանգ ուսումնական միջավայրը գնահատվում է բարձր ռիսկային: Փորձագիտական խմբի պնդմամբ շինության անվտանգության հետ կապված աշխատանքներն առավել քան հրատապ են քոլեջի համար և առավել քան հստակ է՝ քոլեջն իր առջև ծառացած մարտահրավերն առանց պետության, մասնավոր հատվածի կամ դոնոր կազմակերպությունների օժանդակության չի կարող հաղթահարել: Այդքանով հանդերձ, փորձագիտական խումբը բարձր է գնահատում քոլեջի ներդրած ջանքերը՝ միտված ռեսուրսային բազայի համալրմանը, ձևավորված սահմանափակ արտաբյուջեի հաշվին շենքային պայմանների բարելավմանը: Դրական է, որ ավելացել են ուսման վարձավճարներից մուտքերը՝ ի հաշիվ վճարովի համակարգում սովորող ուսանողների թվաքանակի ավելացման: Սակայն քոլեջի բյուջեի ծախսային հոդվածներում գերակշռում են ընթացիկ ծախսերը՝ ի դեմս աշխատավարձի ֆոնդի, ուստի բյուջեից միջոցներ չեն ազատվում, որոնք կարող էին ուղղվել քոլեջի զարգացմանը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, քոլեջը նպատակադրել է բազմազանեցնել ֆինանսավորման աղբյուրները և 2022թ. շահել է Էրազմուս+ ծրագիրը:

Փորձագիտական խումբը Կառավարում և վարչարարություն չափանիշի գնահատումն իրականցրել է նոր ՌԾ-ի շրջանակում և նոր տնօրենի պաշտոնավորման ժամանակահատվածի կտրվածքով, և ըստ փորձաքննության արդյունքների, քոլեջի կառավարման համակարգը կարճ ժամկետում արդյունավետություն է ապահովել, մասնավորաբար՝ կանոնակարգվել է կառավարչական գործընթացների փաստաթղթային հենքը, Կառավարման խորհրդի կազմում ընդգրկվել են տարածաշրջանի բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք շահագրգիռ են իրենց կազմակերպություններում քոլեջի շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հարցում, կիրառության մեջ են դրվել ռազմավարական կառավարման գործիքները, պլանավորումներն ու կատարողականները

համահարթ են, կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորություններն ու պատասխանատվությունները բաշխված են, պաշտոնների անձնագրերով և աշխատակարգերով հաստիքային գործառույթները հստակ տարանջատված են: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է բարելավել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների կատարողականները՝ ներառելով որակական վերլուծություններ, սահմանել արդյունքի գնահատման ցուցիչներ և չափել ձեռքբերված արդյունքը, բարելավել գնահատում-բարելավում շրջափուլի գործիքակազմը: Փորձագիտական խմբի կարծիքով վերը նշյալ գործընթացների իրականացման համար կարևոր նախապայման է որակի ապահովման մշակույթի ամրապնդումն ու որակի ապահովման գործիքների կատարելագործումը, ինչի շրջանակում քոլեջը դեռևս հիմնարար և ջանադիր աշխատանքներ ունի իրականացնելու: Մասնավորապես՝ մտահոգիչ է, որ ներքին շահակիցները լիարժեքորեն չեն ընկալում իրենց դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում և հստակ չեն տարանջատում ՈԱ մեխանիզմները՝ չունենալով դրանց կիրառության փորձառություն: Ի հավելումն՝ ուսանողները բավարար իրազեկվածություն չունեն քոլեջում գործող որակի ապահովման խմբի աշխատանքներից և էական մասնակցություն չեն ունեցել ՈԱ գործընթացներին: Ճիշտ է, քոլեջում ներդրվել է հարցումների իրականցման գործընթացը, որոնց միջոցով վեր են հանվում ներքին և արտաքին շահակիցների որոշ կարիքները, որոշ խնդիրներ լուծումներ ստանում, այդուհանդերձ հարցումները չունեն որակական վերլուծությունների ամփոփումներ, բարելավման ենթակա խնդիրները համակարգված չեն, բարելավումների հիմքում դրված չեն հավաքագրված տվյալները, առաջնահերթությունները, խնդիրների լուծման բաղադրիչները ներդրված չեն հաջորդ տարվա պլանավորումներում: ՈՒստի փորձագիտական խմբի դիտարկմամբ՝ վտանգվում է ՈԱ մշակույթի տարածումն ու զարգացումը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈԱ պատասխանատուի ներդրած ջանքերը ոարակի մշակույթի ձևավորման և տարածման գործում, սակայն նրա ծարնաբեռնված աշխատանքը ռիսկեր է պարունակում ՈԱ գործընթացների արդյունավետ իրականացման համար:

Գովելի է, որ քոլեջում ներդրված են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, քոլեջի գործունեությամբ հետաքրքրված կառույցների և մարդկանց համար կրթական միջավայրը հասանելի է ու հրապարակային: Փորձագիտական խումբն ընդգծում է, որ քոլեջը տարածաշրջանի առաջատար բուժհաստատությունների հետ ձևավորել է կայուն համագործակցային և մասնակցային կրթական միջավայր՝ քայլեր են իրականացվում գործընկերության ցանցի զարգացման համար, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գործարար և հանրային կառույցների հետ ընդլյանվել է համագործակցությունների շրջանակը, գործնական պարապմունքներն ու պրակտիկաները իրականացվում են գործընկերների բազաներում, բժիշկ դասախոսներ են ներգրավվում ՊԴ կազմում: Ձևավորված բազմապրոֆիլ և արդյունավետ համգործակցությունները քոլեջին հնարավորություն են ընձեռել կրթության վեկտորն ուղղել կիրառական արդյունքների ձեռքբերմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տարածաշրջանում միակ պետական բժշկական քոլեջը:
2. Բժիշկ-դասախոսների առկայությունը:
3. Գործատուների բազաների համատեղ օգտագործումը:
4. Գործատուների հետ սերտ համագործակցությունը, հետադարձ կապի ապահովման կայուն մեխանիզմների առկայությունը:

5. Արդյունավետ ՄԿԾ-ների առկայությունը:
6. Դասավանդման ինտերակտիվ և ուսանողակենտրոն մեթոդների կիրառումը:
7. Հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածությունը:
8. Գործնական, վերլուծական, հետազոտական կարողություններ ձևավորող առաջադրանքների առկայությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Շենքային պայմանների ոչ բարվոք վիճակը:
2. Լաբորատորիաների ռեսուրսների ոչ բավարար և արդի լինելը:
3. Գնահատման առանցքային ցուցիչների բացակայությունը:
4. ՈԱ գործիքակազմի անկատարությունը:
5. Որակի ապահովման մշակույթի ոչ լիարժեք պատկերացումը:
6. Դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը:
7. Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ներդնել ՌԾ-ի կատարման պլան-ժամանակացույցներ, ՌԾ-ի կատարողականներ:
2. Մշակել և գործարկել ՌԾ-ի կատարողականի վերահսկման և գնահատման գործիքակազմ:
3. Ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների հետ շփման հարթակը, համակարգել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացը:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Բարելավել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների կատարողականները, ներառել որակական վերլուծություններ:
5. Սահմանել արդյունքի գնահատման ցուցիչներ և չափել ձեռքբերված արդյունքը:
6. Նպաստել դասախոսների և ուսանողների ներգրավվածության բարձրացմանը՝ իրենց առնչվող որոշումների կայացման հարցում:
7. Բարելավել գնահատում-բարելավում շրջափուլի գործիքակազմը:
8. Ֆինանսավորման նոր ձևաչափեր գտնել:

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Հստակեցնել և համապատասխանեցնել կրթական ծրագրերի և առարկայական/մոդուլային ծրագրերի վերջնարդյունքները:
10. Բարելավել և գործարկել գնահատման քաղաքականությունը՝ հստակեցնելով յուրաքանչյուր մոդուլի գնահատման չափորոշիչները:
11. Մշակել և գործարկել ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ, իրականացնել բենչմարքինգ:
12. ՄԿԾ-ների վերջնարդյունքներում թիրախավորել բժշկության ոլորտի ժամանակակից հմտությունների ձեռքբերումը:

Ուսանողները

13. ՈՒԽ կազմում ընդգրկել ուսանողներ բոլոր մասնագիտություններից։
14. Սերտացնել ՈՒԽ-ի և ՈԱ կենտրոնի համագործակցությունը։
15. Բարձրացնել ուսանողների իրազեկվածությունը ՈՒԽ և ՈԱ գործընթացներից։
16. Ամփոփել և համակարգել ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատումը՝ հստակեցնելով բարելավման ենթակա առանցքային խնդիրները։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Իրականացնել դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումներ, ապահովել դրանց պարբերականությունը։
18. Մշակել և գործարկել հստակ և բազմագործոն բաղադրիչների հիմքով դասախոսների վարկանիշավորման կարգ։
19. Ներդնել դասախոսների խրախուսման մեխանիզմներ։

Հետազոտությունը և զարգացումը

20. Հստակեցնել քոլեջի հետազոտական ուղղությունները և տեղայնացնել երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում։
21. Կատարելագործել և համալրել հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքները։
22. Լաբորատոր ռեսուրսային բազան համալրել հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ բժշկական պարագաներով։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

23. Մշակել շենքային պայմանների բարելավման հստակ քաղաքականություն՝ ներգրավելով գործընկեր կազմակերպություններին։
24. Քայլեր ձեռնարկել ֆինանսավորման նոր աղբյուրների բացահայտման ուղղությամբ։
25. Ռեսուրսային բազան համալրել արդի սարքավորումներով և բժշկական պարագաներով։
26. Մշակել գործընկեր կազմակերպությունների հետ ռեսուրսների համատեղ կիրառման նոր ձևաչափեր։

Հասարակական պատասխանատվությունը

27. Մշակել հաշվետվությունների միասնական ձևաչափ՝ ներառելով որակական վերլուծությունների բաղադրիչ և բարելավման ենթակա խնդիրների դուրսբերման պահանջ։
28. Տարանջատել հաշվետվություններն ըստ ներքին և արտաքին օգտագործողների խմբերի։
29. Զարգացնել հետադարձ կապի ապահովման և հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմները։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

30. Զարգացնել բազմապրոֆիլ և դրամաշնորհային համագործակցությունները։
31. Համանման ուսումնական հաստատությունների հետ իրականացնել բենչմարքինգ։

32. Բարձրացնել դասախոսների և ուսանողների անգլերենի և այլ օտար լեզուների իմացության մակարդակը:

Որակի ներքին ապահովման համակարգը

33. Կանոնակարգել ՈԱ գործընթացներն ու ՈԱ գործիքակազմը:
34. Մշակել և կիրառել ՈԱ մշակույթի տարածման արդյունավետ մեխանիզմներ:
35. Բարձրացնել ներքին շահակիցների ՈԱ գործընթացներից իրազեկվածությունը, իրականացնել ներքին վերապատրաստումներ, ներգրավել նրանց ՈԱ գործընթացներում:
36. Ընդլայնել գործատուների և շրջանավարտների մասնակցությունը ՈԱ գործընթացներում:
37. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը բոլոր ստորաբաժանումների աշխատակարգերում:
38. Հստակեցնել ՈԱ պատասխանատուի աշխատանքային բեռնվածությունը և առաջնային գործառույթները, գնահատել աշխատանքի արդյունավետությունը:

01 դեկտեմբերի 2023 թ.

Արմենուհի Մհերյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. Փորձագիտական խմբի ղեկավար՝ **Արմենուհի Մհերյան** - Հայաստանի Եվրոպական համալսարանի «Ֆինանսներ և բանկային գործ» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստան:
2. **Աննա Սուքիասյան** - ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտի Նեյրոհորմոնների կենսաքիմիայի բաժնի գիտաշխատող, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստան:
3. **Իզաբելլա Միրզոյան** - Հայկական բժշկական ինստիտուտ, Ներքին հիվանդությունների ամբիոնի դասախոս, Հայաստան:
4. **Արեգ Խալափյան** - Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող, Հայաստան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ քարտուղարության ղեկավար՝ ***Անահիտ Ութմազյանը:***

Արձանագրությունները կազմել է՝ ***Էդիտա Քասինյանը:***

Փորձագիտական խմբի բոլոր անդամներն ու համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագիր և շահերի բախման բացառման հայտարարագիր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Գյումրու պետական բժշկական քոլեջը 2023 թվականի հունվարի 13-ին դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից (27.01.2023թ.) հետո ՈԱԱԿ-ի և ԳՊԲՔ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթիձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ հաստատությունների հետ: Աշխատաժողովներընպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ: Ինքնավերլուծության իրականացման ընթացքում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել են ընթացիկ քննարկումներ առաջացած հարցերը պարզաբանելու նպատակով:
Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթները ներկայացվել են 2023թ. հունիսի 6-ին: Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Խմբում ներգրավված են եղել ներկայացուցիչներ քոլեջի վարչական, ուսումնական, պրոֆեսորադասախոսական համակազմից,:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Հիմք ընդունելով համակարգողի եզրակացությունը, կայացվել է որոշում վերանայված ինքնավերլուծությունն ընդունելու մասին:
Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը և քոլեջի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը փորձագետների հետ քննարկել են ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշներն ու չափորոշիչները, փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները, նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները, հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:
Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով բուհի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ սահմանված ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[1], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև, փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]: Առաջնորդվելով

Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախնական այց

2023 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի է ունեցել առցանց հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցն իրականացվել է 2023թ. սեպտեմբերի 25-ից 28-ն ընկած ժամանակահատվածում: Այցին մասնակցել են փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և համակարգողի օգնականը: Փորձագիտական այցի նախորդ օրը փորձագիտական խումբն իրականացրել է քոլեջի ռեսուրսների ու ենթակառուցվածքների[3] դիտարկում: Այնուհետև, տեղի է ունեցել փորձագիտական խմբի և համակարգողի փակ հանդիպում, քննարկվել են փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցվել են հետագա քայլերը:
Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով:Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով:Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն 4, այցելել է բազային կլինիկաներ, իրականացրել դասալսումներ:
Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների միջանկյալ արդյունքներն ամփոփվել են յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում: Այցի ավարտին ամփոփիչ հանդիպման ժամանակ փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման արդյունքում՝ կիրառելով փոխհամաձայնության սկզբունքը:
Փորձագիտական գնահատումը կատարվել է՝ ըստ Հավատարմագրման պետական չափանիշների, գնահատման երկաստիճան սանդղակով՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ:

Փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ Գյումրու պետական բժշկական քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել:

Փորձագիտական խումբը վերջնականացրել է զեկույցը և տրամադրել ուսումնական հաստատությանը 2023 թվականի դեկտեմբերի 1-ին:

01.12.2023 թ.

Անահիտ Ութմազյան

Փորձագիտական խմբի համակարգող

[1] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

[3] Հավելված 4. Ուսումնասիրված ռեսուրսներ

4 Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Գյումրու պետական բժշկական քոլեջը հիմնադրվել է 1937թ.: 1937թ. հիմնադրվել է որպես Լենինականի բժշկական միջնակարգ դպրոց, այնուհետև վերանվանվել է.

- ՀՍԽՀ Առժողկոմատի ֆելդշերա-մանկաբարձական դպրոց
- Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության Լենինականի բժշկական ուսումնարան
- ՀՀ Առողջապահության մինիստրության Կումայրիի բժշկական ուսումնարան
- ՀՀ Առողջապահության մինիստրության Գյումրիի բժշկական ուսումնարան
- Գյումրու պետական բժշկակաո քոլեջ՝ 2004թ.-ից:

Հիմնադրման օրվանից Քոլեջը մշտապես եղել և մնում է Շիրակի մարզի միակ պետական բժշկական ուսումնական հաստատությունը:

Քոլեջը տարածաշրջանում հայտնի է ոչ միայն իր ավանդույթներով, այլև հարուստ տարեգրությամբ: Այստեղ են ավարտել և հետագա շարունակական կրթություն ստացել հանրապետությունում ճանաչված առողջապահության շատ երախտավոր բժիշկներ: Մինչ այսօր էլ քոլեջն ավարտած լավագույն շրջանավարտներն իրենց կրթությունը շարունակում են հանրապետության տարբեր բուհերում:

Գյումրու պետական բժշկական քոլեջի առաքելությանը համապատասխան ռազմավարական ծրագիրը միտված է բարձրորակ կրթական միջավայրի ստեղծմանը:

Ընդունելով ժամանակակից մարտահրավերները քոլեջն իր առջև նպատակ է դրել դառնալ առողջապահության համակարգի տարածող և զարգացնող մի կառույց, որը կապահովի կրթության բարձր չափանիշները առաջնային առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների համալիր խնամքի և առողջության վերականգնման խնդիրներում:

Գյումրու պետական բժշկական քոլեջն իր զարգացման ռազմավարական ծրագրում խնդիր է դնում կատարելագործել քոլեջի իրավական դաշտը և կառավարման համակարգը:

Ներդնելով կառուցվածքային ստորաբաժանումների, ամբիոնների հաշվետվությունների համակարգը՝ բարձրացնել շահակիցների իրազեկվածության մակարդակը, կառավարման համակարգի թափանցիկությունը: բարձրացնել ուսանողների ներգրավվածությունը ԳՊԲՔ կառավարման համակարգում:

Կրթություն. Գյումրու պետական բժշկական քոլեջը, որպես միջին մասնագիտական քոլեջ իրականացնում է «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտական կրթական ծրագրեր, որոնք համահունչ են քոլեջի առաքելությանը: Ընդունելով ժամանակակից մարտահրավերները՝ քոլեջն անդամագրվել է կրթության բարելավման և զարգացման գործընթացի կազմակերպմանը, որը հնարավորություն կտա գիտելիքի որակի բարձրացման, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

ԳՊԲՔ –ի 90 ամյա տարեգրությունը վկայում է, որ քոլեջը տարածաշրջանի բարձր վարկանիշ ունեցող կրթօջախ լինելով առանձնանում է ճկուն, մրցունակ, մատչելի ուսումնական ծրագրերով, որը հնարավորություն կտա մեր շրջանավարտներին լիարժեք կերպով օգտագործել իրենց ներուժը մրցակցային աշխատաշուկայում:

Քոլեջն ունի երկար տարիների փորձ ունեցող, բարձրագույն, ինչպես նաև միջին մասնագիտական կրթություն ունեցող որակյալ դասախոսական կազմ:
Մասնագիտությունների կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու համար որակյալ դասախոսական կազմով ապահովված լինելը քոլեջի 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրով սահմանված է որպես ռազմավարական գերակայունություն: Քոլեջի համար ռազմավարական նպատակ է.

- Շարունակել ներգրավել բարձրորակ մանկավարժ/բժիշկ դասախոսներ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:
- Առավել զարգացնել դասախոսների պարբերական վերապատրաստումները:
- Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը՝ ուսումնա-մեթոդական կաբինետում ստեղծելով ստեղծագործ դասախոսի ցուցադրության անկյուն:
- Մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով արդիականացնել մանկավարժական-դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակված մեխանիզմ՝ ըստ գործունեության արդյունքների և աշխատանքի արդյունավետության:
- Բարձրացնել քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

ԳՊԲՔ մոդուլային կրթական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի վերանայմանը զուգահեռ վերանայել է դասավանդման և ուսումնառության ավանդական փորձը և ուսումնական գործընթացում ներդվել են նորարարական մեթոդներ, որոնցից առանցքայինը ուսանողակենտրոն մոտեցումն է: Այս մեթոդները հնարավորություն են տալիս կրթական ծրագրի շրջանակում հասնել գիտելիքների,կարողությունների և հմտությունների ձեռքբերման:
Քոլեջը լինելով կրթական համակարգի արդի պահանջներին հետևող, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը ներգրավված է քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում: Քոլեջի հիմնական առաքելությունն է գիտելիքի փոխանցումն ու տարածումը, որը կնպաստի գիտելիքի որակի և վարկանիշի բարձրացմանը, արդի աշխատաշուկայի պահանջներին բավարարող բուժքույրերի, մանկաբարձների, դեղագործների և ատամնատեխնիկների դասական մոդելի ձևավորմանը, սովորողների սեփական գործելակերպն ու կարողություններն ազգաբնակչության շահերին համապատասխանեցմանը, միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Հետազոտություն. Քոլեջի ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նախանշել միջին մասնագիտական ոլորտի մասին նոր պատկերացումները, ճշտել այն խնդիրների ցանկը, որը կկարողանա լուծել արդի պահանջներին համապատասխանող գիտելիքների կիրառման ձևերին տիրապետող, պահանջարկ ունեցող մասնագետը: Դրա համար քոլեջը ձգտում է ուսանողների մեջ արմատավորել աշխատանքի նկատմամբ պատասխանատվության զգացում: Քոլեջը կանորում է ուսանողների ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացումը, որը շատ կարևոր բաղադիչ է հանդիսանում աշխատանքային գործունեության ժամանակ:

Միջազգայնացում. Քոլեջն իր ռազմավարական ծրագրի հիմնախնդիրներից մեկը համարում է համագործակցությունների ընդլայնումը և միջազգային կապերի հաստատումը:
Ակտիվացնելով գործընկերների հետ համագործակցությունը՝ նրանց ընդգրկելով ուսուցման գործընթացի կատարելագործման, աշխատանքի տեղավորման, ներդրումների կատարման, նոր

գործընկերներով համալրելու և սովորողներին խորհրդատվական ծրագրերում ընդգրկելու գործում, քոլեջը նպատակ ունի համագործակցությունների արդյունքում բարելավել և կատարելագործել կրթական գործընթացը:
Համագործակցությունները հնարավորություն կտան ստեղծելու պայմաններ դասախոսների և ուսանողների շարժունության համար, հնարավորություն կստեղծվի քոլեջին ընդգրկվել տարբեր ծրագրերում:

Որակի ապահովում. Գյումրու պետական բժշկական քոլեջի ռազմավարական նպատակներից մեկն է հանդիսանում որակի ներքին ապահումը: Քոլեջի նպատակն է ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար: Իրականացնելով կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց քոլեջը հստակ պատկերացում է կազմում իր ուժեղ և թույլ կողմերի մասին, մշակում բարելավման ուղիներ՝ թույլ կողմերը վերացնելու և կրթական գործընթացն արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Գյումրու պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ ԳՊԲՔ) 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրով (այսուհետ՝ ՌԾ) քոլեջի հիմնական առաքելությունը գիտելիքի փոխանցումն ու տարածումն է, որը կնպաստի գիտելիքի որակի և վարկանիշի բարձրացմանը, արդի աշխատաշուկայի պահանջներին բավարարող բուժքույրերի, մանկաբարձների, դեղագործների և ատամնատեխնիկների դասական մոդելի ձևավորմանը, սովորողների սեփական գործելակերպն ու կարողություններն ազգաբնակչության շահերին համապատասխանեցմանը, միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետների պատրաստմանը: Քոլեջի զարգացման քաղաքականությունը միտված է «հիվանդի խնամք և բնակչության բարձրորակ առաջնային բուժօգնություն ապահովող» շրջանավարտների պատրաստմանը: Քոլեջի առաքելությանը համապատասխան ներկայացված են նաև քոլեջի տեսլականը, հիմնարար արժեքները: ՌԾ-ով սահմանված ռազմավարական հիմնախնդիրները 10-ն են, որոնք ընդգրկում են քոլեջի գործունեության ողջ շրջանակը՝ շենքային և տեխնիկական պայմանների բարելավում, կրթական ծրագրերի վերափոխում, ներքին որակի ապահովման համակարգի կատարելագործում, դասախոսական կազմի համալրում, տեղեկատվական բազայի զարգացում, կառավարման արդյունավետության բարձրացում և այլն: Առաջադրված են նախանշված ռազմավարական հիմնախնդիրների լուծման քայլերը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ով սահմանված հիմնախնդիրները ճանաչելի են քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կողմից, դրանց լուծման քայլերը ընդհանրության մեջ արտահայտում են քոլեջի գործընթացները: Հարկ է նշել, որ առկա է նաև 2018-2023թթ. քոլեջի Զարգացման ծրագիրը, որի գործողության ժամկետը դեռ չավարտված՝ ներդրվել է 2022-2027թթ. ՌԾ-ն: Այդ երկու ծրագրերը առաքելության ձևակերպմամբ, տեսլականի, հիմնարար արժեքների և հիմնախնդիրների շեշտադրմամբ նույնական են: Տարբերակիչ կետերն են՝ ՌԾ-ում կարևորվում է գործատուների հետ համագործակցության շրջանակի զարգացումը, նշված են լրացուցիչ ֆինանսական միջոցները, ֆոնդահայթթման միջոցառումները (լրացուցիչ կրթության կազմակերպում, նախապատրաստական դասընթացների, մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպում, կադրերի վերարտակավորում, որակավորման բարձրացում, սպասարկման ծառայությունների իրականացում, ծրագրային մրցույթներին մասնակցություն և դրամաշնորհային մուտքերի ստացում, բարեգործական կազմակերպությունների աջակցություն և այլն):

Ընդհանուր առմամբ, քոլեջը տարբեր հանդիպումների, քննարկումների, գործատուների հետ աշխատանքի արդյունքներով կարևորում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, միևնույն ժամանակ դրանք փաստաթղթավորված, ամփոփված չեն և դրված չեն նոր ՌԾ-ի մշակման հիմքում: Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացները դեռևս համակարգված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները 2022-2027թթ. ՌԾ-ի մշակման աշխատանքներին էական մասնակցություն չեն ունեցել:

Քոլեջում մշակված չեն 2018-2023թթ. ԶԾ-ի պլան-ժամանակցույցի և կատարողականի ձևաչափեր: 2022-2027թթ. ՌԾ-ի պլան ժամանակցույց, որպես այդպիսին, ևս մշակված չէ: ՌԾ-ով սահմանված գործողությունները ներդրված են տնօրենի և ստորաբաժանումների աշխատանքային պլաններում, որոնց արդյունքները որոշակիորեն ամփոփված են համապատասխան տարեկան հաշվետվություններում:

Հարկ է նշել, որ քոլեջի 2018-2023 թթ. ԶԾ-ով սահմանվել են ԶԾ-ի ակնկալվող արդյունքները՝ տարածաշրջանում հեղինակություն վայելող ու բարեկարգ վիճակում գտնվող արդի կրթական պահանջները բավարարող որակյալ մասնագետներ պատրաստող օրինակելի հաստատության ձևավորում, դիմորդների հոսքի ավելացում, հեռակա կրթաձևի ներդրում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի համար առաջնային խնդիր է շենքի կապիտալ վերանորոգումը: 2022-2027թթ. ՌԾ-ի համար սահմանված չեն արդյունքների գնահատման ցուցիչներ, որոնցով հնարավոր կլիներ գնահատել ՌԾ-ն:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԳՊԲՔ-ի առաքելությունն արտահայտում է քոլեջի հիմնական նպատակները, ունի հստակ ձևակերպում, միտված է աշխատաշուկայի պահանջարկի բավարարմանն ու բնակչությանը բարձրորակ առաջնային բուժօգնություն ապահովող շրջանավարտների պատրաստմանը:

Գնահատելի է, որ ՌԾ-ով սահմանված ռազմավարական հիմնախնդիրները ընդգրկում են քոլեջի գործունեության ողջ շրջանակը, դրանք ճանաչելի են ներքին և արտաքին շահակիցների կողմից և այդ հիմնախնդիրների լուծման քայլերը արտահայտված են քոլեջի գործընթացներում՝ նպաստելով քոլեջի առաքելության և իրականացրած քաղաքականության ներդաշնակեցմանը:

Պայմանավորված 2021թ. տնօրենի նոր ընտրություններով՝ 2018-2023թթ. քոլեջի Զարգացման ծրագրի ժամկետը դեռևս չավարտված՝ ներդրվել է 2022-2027թթ. ՌԾ-ն, և քանի որ այդ 2 ծրագրերը առաքելության, տեսլականի, հիմնարար արժեքների ու շեշտադրված հիմնախնդիրների ձևակերպման տեսանկյունից նույնական են, հետևաբար քոլեջում իրականացվող բոլոր գործընթացները տրամաբանական հաջորդականության մեջ են: Զուգահեռաբար խրախուսելի է, որ նոր ՌԾ-ում կարևորվում է գործատուների հետ համագործակցության շրջանակի զարգացումը, առանձնացված են լրացուցիչ ֆինանսական միջոցները, ֆոնդահայթաթման միջոցառումները, մասնավորաբար՝ լրացուցիչ կրթության, նախապատրաստական, մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպումը, կադրերի վերարտակավորումը, սպասարկման ծառայությունների իրականացումը, ծրագրային մրցույթներին մասնակցություն և դրամաշնորհային մուտքերի ստացումը, որոնք միասնաբար կիրառելու պարագայում հնարավոր է զգալիորեն ավելացնել քոլեջի եկամուտները և ուղղել առաջնային նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը:

Գովելի է, որ գործատուների հետ կազմակերպված տարբեր քննարկումների և հանդիպումների արդյունքում կարևորվել են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, սակայն դրանք ամփոփված չեն և նոր ՌԾ-ի մշակման հիմքում չունեն իրենց դիրքավորումը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացները դեռևս ամբողջական և համակարգված չեն, ինչը կարող է խոչընդոտել քոլեջի հետագա զարգացումը:

Անհանգստացնող է, որ քոլեջը չունի ՌԾ-ի պլան-ժամանակցույց և ՌԾ-ի կատարողական, որոնք կնպաստեին քոլեջի նպատակների իրականացման արդյունքների գնահատմանը և որակի

շրջափուլի ամփոփմանը: Դրական արձանագրում է, որ ՌԾ-ով սահմանված գործողությունները ներդրված են տնօրենի և ստորաբաժանումների աշխատանքային պլաններում և դրանց արդյունքների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն է ներկայացված համապատասխան տարեկան հաշվետվություններում: Գովելի է, որ տարածաշրջանում հեղինակություն վայելող ու բարեկարգ վիճակում գտնվող արդի կրթական պահանջները բավարարող որակյալ մասնագետներ պատրաստող օրինակելի հաստատության ձևավորումը, դիմորդների հոսքի ավելացումը 2018-2023թթ. ԶԾ-ի ակնկալվող արդյունքներն են, այդուհանդերձ փորձագիտական խումբն իր դիրքորոշումն է ներկայացնում առ այն, որ շենքի կապիտալ վերանորոգումը և ռեսուրսային բազայի բարելավումը լուրջ մարտահրավեր է քոլեջի համար, առանց որի հնարավոր չէ ապահովել ակնկալվող արդյունքների ամբողջական ձեռքբերումը: ՌԾ-ի արդյունքների գնահատման ցուցիչների բացակայությունը խոչընդոտում է ՌԾ-ի գնահատումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊԲՔ-ն ունի տարածշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ առաքելություն՝ միտված բնակչությանը բարձրորակ առաջնային բուժօգնություն ապահովող շրջանավարտների պատրաստմանը, ՌԾ-ով սահմանված նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, գործողությունների առաջնահերթություններում քոլեջը ներառել է իր գործունեության առաջնային հիմնախնդիրները, սահմանված են ԶԾ-ի ակնկալվող արդյունքները, փորձագիտական խումբը գտնում է, ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Ըստ քոլեջի կանոնադրության՝ «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, լիազորված պետական կառավարման մարմինը, քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը և որպես գործադիր մարմին՝ քոլեջի տնօրենը: Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը (այսուհետ՝ ԿԽ) իր գործունեությունը ծավալում է 2022թ. Կառավարման խորհրդի աշխատակարգով սահմանված դրույթներին և սահմանված ժամանակացույցին համապատասխան: ԿԽ-ի նոր կազմը հաստատվել է 2022թ., ունի 11 անդամ, ուր ներգրավված են տարածարջանի բժշկական ծառայություններ մատուցող գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներ: ԿԽ անդամները շահագրգիռ են քոլեջի մասնագիտական գրավչությունը բարձրացնելու և քոլեջի շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հարցում:

ԳՊԲՔ-ի կազմակերպական կառուցվածքին համապատասխան քոլեջում գործում են մանկավարժական խորհուրդը, ուսումնամեթոդական խորհուրդը, տնօրինական խորհուրդը, ուսանողական խորհուրդը: Հարկ է նշել, որ 2022թ. մշակվել և հաստավել են մանկավարժական, ուսումնամեթոդական, տնօրինական խորհուրդների իրավասությունների և գործունեության կարգերը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այդ կարգերում հստակ առանձնացված են խորհուրդների գործունեության հիմնական խնդիրներն ու ուղղությունները, որոնք համարժեք են քոլեջի կրթական գործընթացներին: ԿԽ-ում ընդգրկված դասախոսներն ու ուսանողները մասնակցում են խորհրդի նիստերին, հարցերի քննարկմանը, քվեարկություններին, սակայն նախաձեռնող չեն իրենց առնչվող հարցերի ձևակերպմանը և քննարկմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԿԽ-ում բարձրացված և քննարկված հարցերը հիմնականում վերաբերում են տարածաշրջանային կարիքներին համահունչ կրթական գործընթացների համակարգմանը, բոլոր շահակիցների հետ համագործակցային կրթական միջավայրի ձևավորմանը:

Քոլեջի գործադիր մարմինը տնօրենն է, ով ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով ու քոլեջի կանոնադրությամբ տնօրինում է քոլեջի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները: Տնօրենն ընտրվել է 2021թ. դեկտեմբերին և իր պաշտոնավարման 1-ին շրջափուլն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ տնօրենի պաշտոնավարման ժամանակահատվածը ներառող գործընթացները ամփոփումներ չունեն, առկա չեն տնօրենի տարեկան հաշվետվություններ, դրանք ԿԽ-ին ներկայացվել են բանավոր:

2022-2027թթ. ՌԾ-ի 9-րդ հիմնախնդիրը վերաբերում է կառավարման արդյունավետության ու վարչական ծառայությունների որակի բարձրացմանը: Նշյալ հիմնախնդրի լուծման համար քոլեջը նախանշել է գործողություններ, որոնցից առանձնանում են՝ կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորությունների ու պատասխանատվությունների բաշխման հստակեցումը, ուսանողական ինքնավարության զարգացումը, ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացման համար միջոցառումների ձեռնարկումը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարճ ժամկետում քոլեջը մշակել և գործողության մեջ է դրել կառավարչական գործընթացների կանոնակարգման փաստաթղթային հենքը, պաշտոնների անձնագրերով և աշխատակարգերով հստակ տարանջատված են հաստիքային գործառույթները, հստակ է խորհուրդների, ստորաբաժանումների աշխատանքային պարտավորությունների շրջանակը: Ինչ վերաբերում է ուսանողների ինքնավարության զարգացմանն ու ինքնազարգացմանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի ուսանողները որոշակի մասնակցություն ունեն քոլեջի կառավարչական գործընթացներին, տարբեր խորհուրդներում ունեն անհրաժեշտ ներկայացվածություն, միևնույն ժամանակ ցածր է ուսանողների նախաձեռնողականությունը կրթական խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղիների առաջադրման կոնտեքստում:

Քոլեջի եկամուտների ձևավորման աղբյուրները պետությունից տրամադրված պաշտոնական դրամաշնորհներն ու ուսման վարձավճարներն են: Դրանց հարաբերակցությունը վերջին տարիներին որոշակի փոփոխություններ է կրել, մասնավորապես՝ 2023թ. տվյալներով պետական ֆինանսավորում՝ 55%, ուսման վարձավճարներ՝ 45%: Նշյալը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին պետության կողմից հատկացված անվճար տեղերի թիվը նվազել է, դրան զուգահեռ՝ ավելացել է վճարովի համակարգում սովորողների թիվը: Ծախսային հոդվածներում գերակշռում են աշխատանքի վարձատրության ծախսերը՝ կազմելով ընդամենը ծախսերի շուրջ 82%-ը: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը ծախսարդյունավետության

գնահատում է իրականացրել, որով պայմանավորված՝ 2023-2024 ուստարվանից ուսման վարձերը բարձրացվել են շուրջ 4,5%-ով՝ նպատակ ունենալով առաջիկայում որոշակիորեն ավելացնել քոլեջի եկամուտները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը վերջին 2 տարում ակտիվ գործընթացներ է իրականացնում ֆինանսավորման նոր աղբյուրներ գտնելու ուղղությամբ, դիմել է դոնոր կազմակերպությունների, դեռևս հաջողությունների չի գրանցել այդ ուղղությամբ: Բացի այդ, քոլեջը դիմել և շահել է Էրազմուս+ ծրագիրը, որի շրջանակում ֆինանսական հնարավորություններ կարող են ընձեռնվել «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի ռեսուրսային բազան բարելավելու համար:

Քոլեջի երկարաժամկետ պլանավորման գործիք է 2022-2027թթ. ՌԾ-ն, կարճաժամկետ պլանավորման համար կիրառվում են աշխատանքային պլանները: Առկա են տնօրենի և բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլանները, որոնք ընդհանրության մեջ համահունչ են ՌԾ-ին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ երկարաժամկետ ու կարճաժամկետ պլանները հիմնախնդիրների առաջադրման և լուծման քայլերի հաջորդականության հիմքով ընդհանուր առմամբ համահունչ են: Քոլեջի նախանշած գործողությունների կատարողականները ամփոփված են ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններում, որոնք նույն ձևաչափի մեջ չեն, պարունակում են հիմնականում քանակական վերլուծություններ, որակական վերլուծությունները սակավ են և հաշվետվություններով դուրս բերված բարելավման ենթակա խնդիրներն ամփոփված չեն: Բացի այդ, և՛ երկարաժամկետում, և՛ կարճաժամկետում բացակայում են արդյունքի գնահատման ցուցիչները: Ընդհանրացնելով՝ գործողությունների պլաններն ու դրանց կատարողականները պլանավորում-իրականացում կապի մեջ համադրելի են, արդյունքի սահմանում-արդյունքի ձեռքբերում կապի մեջ՝ համադրելի չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022թ.-ից քոլեջում մեկնարկել են գնահատումների, որոշ դեպքերում էլ՝ բարելավումների շրջափուլերը, և քոլեջը ձեռնամուխ է եղել ՊԻԳԲ շրջափուլի ամբողջականացման գործընթացի իրականացմանը՝ անհրաժեշտություն ունենալով ամրապնդել որակի ապահովման մշակույթը և կատարելագործել ու բազմազանեցնել որակի ապահովման գործիքակազմը:

2023թ.ուսանողների հարցման արդյունքներով ուսանողների 67,2%-ն է բավարարված քոլեջում ստացած կրթությունից, 24,1%-ը՝ մասամբ են բավարարված: Շրջանավարտների և գործատուների շրջանում կրթական ծրագրերի արդյունավետության հարցումներ դեռևս չեն իրականացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները տարբեր հանդիպումների ընթացքում շեշտադրել են աշխատաշուկայում կարևորություն ունեցող հմտությունների կարիքի վերհանումը, մասնավորապես՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ» և «Դեղագործություն» ՄԿԾ-ների համար աշխատաշուկայի պահանջ է համակարգչային հմտությունների և օտար լեզուների լավ իմացությունը, որոնք դեռևս չեն ներդրվել ՄԿԾ-ների բարելավումներում՝ որպես արտաքին շահակիցների կողմից վերհանված կրթական կարիքների դրսևորումներ:

Քոլեջի կայքէջը դեռևս ներդրման գործընթացում է, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն զետեղված է քոլեջի ֆեյսբուքյան էջում:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ 2022թ. ձևավորված քոլեջի Կառավարման խորհրդի հիմնական կազմը տարածաշրջանի բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչներ են, որոնք շահագրգիռ են քոլեջի մասնագիտական

գրավչությունը բարձրացնելու գործում՝ նպաստելով իրենց կազմակերպություններում քոլեջի շրջանավարտներին աշխատատեղերով ապահովելուն։

Գովարժան է, որ քոլեջում գործող խորհուրդների կարգերում հստակ առանձնացված են խորհուրդների գործունեության հիմնական խնդիրներն ու ուղղությունները՝ նպաստելով կառավարչական գործընթացների կանոնակարգվածության և արդյունավետության բարձրացմանը։

Քանի որ նախորդ տնօրենի պաշտոնավարման ժամանակահատվածի կրթական գործընթացների ամփոփումները առկա չեն, հիմնական արդյունքներն ու բարելավման ենթակա խնդիրները ներկայացվել են բանավոր, ուստի փորձագիտական խումբն իր գնահատումները հիմնականում իրականացրել է նոր ՌԾ-ի շրջանակում և նոր տնօրենի պաշտոնավորման ժամանակահատվածի կտրվածքով։ Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է, որ կարճ ժամկետում քոլեջին հաջողվել է կառավարման մակարդակում գրանցել հաջողություններ, մասնավորապես՝ կիրառության մեջ են դրվել ռազմավարական կառավարման գործիքները, պլանավորումներն ու կատարողականները համահարթ են։ Սակայն, միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ հաշվետվություններով դուրս բերված բարելավման ենթակա ոչ բոլոր խնդիրներն են ամփոփված և ներդրված հաջորդ տարվա աշխատանքային պլաններում, բացակայում են արդյունքի գնահատման ցուցիչները, որոնք հնարավորություն կտային հստակ չափել և գներացնել ձեռքբերված արդյունքը։ Կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորությունների ու պատասխանատվությունների հստակ բաշխվածության, կառավարչական գործընթացների կանոնակարգման փաստաթղթային հենքի մշակման, պաշտոնների անձնագրերով և աշխատակարգերով հաստիքային գործառույթները հստակ տարանջատելու արդյունքում զգալիորեն բարձրացել է կառավարչական գործընթացների արդյունավետությունը։

Փորձագիտական խումբն իր դիտարկումն է ներակայացնում առ այն, որ պետությունից տրամադրված պաշտոնական դրամաշնորհների ու ուսման վարձավճարների հարաբերակցությունը վերջին տարիներին որոշակի փոփոխություններ է կրել՝ քոլեջի բյուջեում պետական ֆինանսավորումից մուտքերը նվազել են, ավելացել են ուսման վարձավճարներից մուտքերը, քանի որ վերջին տարիներին պետության կողմից հատկացված անվճար տեղերի թիվը նվազել է, դրան զուգահեռ՝ ավելացել է վճարովի համակարգում սովորողների թիվը։ Նշյալը պետության ծախսային բեռի թեթևացման տեսանկյունից դրական դիտարկում է, իսկ քոլեջի եկամտային մասի կայունության ապահովման տեսանկյունից՝ ռիսկային։ Հարկ է ավելացնել, որ ծախսարդյունավետության գնահատման արդյունքում 2023-2024 ուստարվանից ուսման վարձերը բարձրացվել են շուրջ 4,5%-ով՝ նպատակ ունենալով որոշակիորեն ավելացնելով քոլեջի եկամուտները՝ ապահովել եկամտային մասի կայունությունը։ Խրախուսելի է, որ ֆինանսական հնարավորությունների ընդլայնման նպատակով քոլեջը դիմել և շահել է Էրազմուս+ ծրագիրը։

Դրական է, որ ԿԽ-ում բարձրացված և քննարկված հարցերը հիմնականում վերաբերում են տարածաշրջանային կարիքներին համահունչ կրթական գործընթացների համակարգմանը, բոլոր շահակիցների հետ համագործակցային կրթական միջավայրի ձևավորմանը, սակայն անհանգստացնող է, որ ԿԽ-ի կազմում ընդգրկված դասախոսներն ու ուսանողները նախաձեռնող չեն իրենց առնչվող հարցերի ձևակերպմանը և քննարկմանը, ինչը կարող է խոչընդոտել քոլեջի կոլեգիալ կառավարման սկզբունքների պահպանմանը։ Գովելի է, որ քոլեջը ձեռնամուխ է եղել ՊԻԳԲ շրջափուլի ամբողջականացմանը՝ թիրախավորելով գնահատում-բարելավում շրջափուլը, որի համար կարևոր նախապայման է որակի ապահովման մշակույթի ամրապնդումն ու որակի

ապահովման գործիքների կատարելագործումը: Նշյալի համատեքստում քոլեջը դեռևս հիմնարար աշխատանքներ ունի իրականացնելու:

Չնայած որ գործատուների հետ հանդիպումների ընթացքում վեր են հանվել ՄԿԾ-ների վերջնարդյուքների ապահովման համար կարևոր և ժամանակակից հմտությունների ձևավորման կարիքը, այնուամենայնիվ, դրանք դեռևս չեն ներդրվել ՄԿԾ-ների բարելավումներում՝ ինչը կարող էր բարձրացնել ՄԿԾ-ների արդյունավետությունը:

Քոլեջի կայքէջում և ֆեյսբուքյան էջում կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը կարող է բարձրացնել քոլեջի և մասնագիտությունների վերաբերյալ իրազեկվածությունը՝ նպաստելով մասնագիտական գրավչության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կարճ ժամկետում քոլեջին հաջողվել է կիրառության մեջ դնել ռազմավարական կառավարման գործիքները, առկա պլանավորումներն ու դրանց կատարողականները համահարթ են, իրականացվել է ծախսարդյունավետության գնահատում, քոլեջը քայլեր է ձեռնարկում ֆինանսական ռեսուրսների ավելացման ուղղությանբ, կանոնակարգվել են կառավարչական գործընթացները և այդ գործընթացներն ապահովող փաստաթղթային հենքը, գործընկերային համագործակցությունները միտված են համագործակցային կրթական միջավայրի ձևավորմանը և տարածաշրջանի կարիքներին համահունչ կրթական գործընթացների համակարգմանը, փորձագիտական խումբը գտնում է, ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն:Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է բավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Գյումրու պետական բժշկական քոլեջում իրականացվում են 4 միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ», որոնք համապատասխանում են քոլեջի սահմանած առաքելությանը, պետական կրթական չափորոշիչներին: Շնորհվող որակավորումները համապատասխանում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին: Առարկայական ծրագրերում ներառված են ակնկալվող արդյունքները, դասավանդման և գնահատման մեթոդները:

2022թ. քոլեջում ներդրվել է Կրթական ծրագրերի գնահատման քաղաքականություն և աստիճանաբար անցում է կատարվել մոդուլային ծրագրերի միջոցով կրթության իրականացմանը: Ընդ որում, յուրաքանչյուր ուստարվա սկզբին մոդուլային

ծրագրերը վերանայվում են, փոփոխությունների դեպքում քննարկվում են ամբիոններում և քոլեջի ուսումնամեթոդական խորհրդում:

Հարկ է նշել, որ առարկայական ծրագրերում ուսումնառության ակնկալվող արդյունքները երբեմն նկարագրում են կրթական ծրագրի, այլ ոչ առարկայական ծրագրի վերջնարդյունքներ: Ուսումնական պլանում առկա են բոլոր անհրաժեշտ առարկաները և պրակտիկաները, ներառյալ նախասիրական առարկաները:

2023թ. քոլեջը մշակել է «Մեթոդական ուղեցույց», ուր ներկայացված են դասավանդման ավանդական և իներակտիվ մեթոդները, դրանց միասնական կիրառման մոտեցումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները հիմնականում կիրառում են դասավանդման ուսանողակենտրոն մեթոդներ, որոնք միտված են կիրառական հմտությունների ձևավորմանը: Որպես օրինակ՝ թիմային ուսուցման մեթոդը իրականացվում է բոլոր ՄԿԾ-ներում հարց-պատասխան (cross-questions) ուսուցման եղանակով, որտեղ ուսանողները հարցեր են տալիս միմյանց և գնահատում՝ բացատրելով և մեկնաբանելով սխալները: Արդյունքահենք ուսուցման (RBL) մեթոդի կիրառելիությունը փոձագիտական խումբը դիտարկել է «Դեղերի մարքետինգ» մոդուլի շրջանակում, երբ 4-5 ուսանողներից բաղկացած խմբեր իրականացնում են շուկայի ուսումնասիրություն, վերլուծություն և արդյունքները քննարկում են լսարանում, տեղայնացվում ուսանողների պորտֆոլիոներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիտարկվող 3 ՄԿԾ-ներում գործնական դասընթացների մեծ մասը, որոշ դասախոսություններ ու բոլոր պրակտիկաներն իրականացվում են գործատուների բազաներում՝ համագործակցության պայմանագրերին համապատասխան: Ընդ որում, վերջին 2 տարվա ընթացքում բոլոր մասնագիտությունների գծով պրակտիկաների բազաների թվաքանակն ավելացել է՝ ներառելով տարածաշրջանի առաջատար բժշկական հաստատությունները:

Դիտարկվող ՄԿԾ-ներում ներառված են ստեղծագործական/հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ, օրինակ՝ «Դեղագործություն» ՄԿԾ-ում ուսանողները պատրաստում են հերբարիումներ, իրականացնում են դեղաբույսերի չորացում և մշակում հատուկ մեթոդիկայով, հնարում են նոր դեղամիջոց՝ համապատասխան բաղադրատոմսով, ազդող նյութով, ինչպես նաև դեղի կողմնակի ազդեցությամբ, ուսանղները պատրաստում նաև պաստառներ, որտեղ պատկերված են դեղերը և դրանց ազդեցությունը յուրաքանչյուր օրգան համակարգի վրա: Տնային առաջադրանքները նաև նախատեսում են համացանցային համակարգից օգտվելու կարողությունները (օրինակ՝ Դեղաբանություն մոդուլը ուսումնասիրելու ընթացքում դասախոսը նշում է դեղերի որոնման աղբյուրը, հետո դասի ժամանակ կազմակերպում քննարկում): «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» ՄԿԾ-ներում ուսանողները գրում են ռեֆերատներ, որոնք բաղկացած են ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականությունից: Դիտարկված ռեֆերատների հիմնական մասերում առկա էին վերլուծություններ, որոշ ամփոփումներ, եզրակացությունների մեջ ուսանողները ներկայացրել էին իրենց ինքնուրույն ամփոփումներն ու եզրահանգումները: Դասավանդման ժամանակ ուշադրություն է դարձվում ախտորոշման ժամանակակից մեթոդներին (էխոկարդիոգրաֆիա, կորոնարոգրաֆիա և այլն), կիրառվում են մուլյաժներ, դերային խաղեր, իրավիճակային խնդիրների լուծում, ուսանողների կողմից ինքնուրույն իրավիճակային խնդիրների կազմում և քննարկում դասի ժամանակ, պաստառների պատրաստում: Բազաներում ուսանողները դասախոսի հետ մասնակցում են հիվանդի հետազոտության գործընթացին (օրինակ՝

զարկերակային ճնշման չափում, սատուրացիայի որոշում, թոքերի լսում), լրացվում են հիվանդության պատմության քույրական քարտ, ուսումնական ծննդաբերության պատմություն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները բոլոր դասընթացների համար կազմում են սեփական աշխատանքային փաթեթներ/պորտֆոլիոներ, որտեղ ներառված են ուսումնառության նյութերն ու ուսանողների կատարած գործնական առաջադրանքները, օրինակ՝ դեղատուփերի պատրաստում, նոր-հնարված դեղեր (օրինակ՝ ծուլության դեմ), անատոմիայի նկարչական ալբոմներ, մասնագիտական բառատետրեր, աշխատանքային տետրեր և այլն։ Ուսանողների կողմից պատրաստված պաստառները կիրառվում էին դասընթացներին, որով ցուցադրվում էր մարդու օրգան-համակարգերի և տարբեր դեղերի ազդեցությունը այդ օրգան-համակարգերի վրա։ Բոլոր ՄԿԾ-ում կարևորվում է բժշկական էթիկայի և դեոնտոլոգիայի հարցերը, որոնք հաջողությամբ յուրացվում են ուսանողների կողմից։

Հաշվի առնելով ուսանողների և գործատուների կարիքները՝ ուսումնական պլաններում պահուստային ժամերի հաշվին ավելացվել են գործնական պարապմունքներին հատկացված ժամերը։ Գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը նպաստելու համար պարապմունքներն անցկացվում են գործատուների բազաներում, ուր հատկացված են կահավորված լսարաններ և ապահովված է կապը հիվանդների հետ։

Փորձագիտական այցի շրջանակում Գյումրու ԲԿ, «Սուրբ Գ. Նարեկացու» անվան պոլիկլինիկա, Գյումրու ԲԿ-ի Գյումրու ծննդատան մանկաբարձագինեկոլոգիական բաժին, «Ժաննա Ֆարմ» դեղատուն այցելությունների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները մասնակցում են հիվանդների զննմանը, ծննդաբերությանը, համակարգչով ուսումնասիրում են սպիրոգրաֆիայի (թոքերով անցնվող օդի ծավալի գրանցում) մեթոդը, լսում են հիվանդի թոքերը, աշխատում են մուլյաժների հետ, պատրաստում են դեղափոշիներ, քսուքներ, մոմիկներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում և գործատուների բազաներում իրականացվում են համատեղ դասեր, օրինակ՝ «Դեղագործություն» ՄԿԾ-ի Դեղագործական քիմիա, Դեղերի տեխնոլոգիա, Դեղագիտություն և ֆարմակագնոզիա մոդուլների միջև, ուր համադրվում են առարկայական հմտություններն ու կարողությունները։ Պրակտիկաները ևս կազմակերպվում են գործատուների բազաներում, պրակտիկաները գնահատվում են պրակտիկայի վայրի ղեկավարի և քոլեջի պրակտիկայի ղեկավարի կողմից՝ պրակտիկայի օրագրի և հաշվետվության հիման վրա։

Գնահատման մեթոդները ևս ներկայացված են քոլեջի կողմից մշակված «Մեթոդական ուղեցույց»-ում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման համակարգը դեռևս ներդրման փուլում է և վերջնարդյունքների գնահատման համար տարբեր դասախոսներ տարբեր մեթոդներ են կիրառում, օրինակ՝ բանավոր հարցում, գրավոր տնային աշխատանքներ, ստուգողականներ, թեստեր, հիվանդության պատմության քարտի լրացում, խնդիրների լուծում, պրակտիկ կարողությունների գնահատում ալգորիթմով։ Դասախոսների կողմից կարևորվում են տեսական և գործնական հմտությունները, ուսանողների ինքնուրույն և հետազոտական աշխատանքները (ռեֆերատներ, հերբարիումների պատրաստում, դեղաբույսերի հատուկ մեթոդիկայով չորացում, համացանցային համակարգից տվյալ թեմայով նյութի պատրաստում)։

Քոլեջը կարևորում է արտաքին շահակիցների՝ պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններն ու գնահատման արդյունքները։ 2021թ. շրջանավարտների շրջանում կատարած հարցումների վերլուծության արդյուքներով վեր է հանվել, որ ամփոփիչ ատեստավորումն ամբողջությամբ չի բացահայտում ուսանողների կարողությունները, որի հիման վրա ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի կողմից առաջարկություն է ներկայացվել պետական ամփոփիչ ատեստավորման ձևաչափը փոխելու վերաբերյալ։ Ներկայումս պետական

ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է երկու փուլով՝ ընդհանուր մասնագիտական մոդուլների և հատուկ մասնագիտական մոդուլների վերաբերյալ, որի արդյունքում գնահատվում են ուսանողների տեսական և գործնական հմտությունների համադրումը: Ամփոփիչ ատեստավորման հարցատոմսերը բաղկացած են 2 մասից՝ գործնական հմտությունների հարցատոմս (3 հարց) և տեսական գիտելիքների հարցատոմս (4 հարց և 1 խնդիր):

Քոլեջի կողմից ուսումնասիրվել են Երևանի հենակետային բժշկական քոլեջի և Վանաձորի պետական բշժկական քոլեջի ՄԿԾ-ները, որոնց հիմքով համեմատական վերլուծություններ և փոփոխություններ չեն իրականացվել ՄԿԾ-ներում:

2022թ. քոլեջում մշակվել է կրթական ծրագրերի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք իրականացման փուլում են և արդյունքները դեռևս ամփոփված չեն: Յուրաքանչյուր ուսումնական տարի բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական ծրագրերը վերանայվում են, ինչպես օրինակ՝ պահուստային ժամերի հաշվին իրականացվել է «Բուսաբանության հիմունքներ», «Մասնավոր դեղաբանություն» և «Լատիներեն լեզու» մոդուլների գործնական պարապմունքների ավելացում: Փորձագիտական այցի շրջանակում գործատուների հետ հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվող բոլոր ՄԿԾ-ների համար անգլերեն, ռուսերեն լեզուների և տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ կարևոր հմտություններ են, որոնց հետ կապված բարելավումները քոլեջը դեռևս չի իրականացրել: Քոլեջն ունի կրթական ծրագրերի մշտադիտարկմանը նպաստող որոշ մեխանիզմներ, օր.՝ ուսանողների, դասախոսների, գործատուների հարցումներ, դասալսումներ, բաց դասերի կազմակերպում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված են գործատուներ, պրակտիկ ոլորտի մասնագետներ, ղեկավար անձնակազմ, սակայն ՄԿԾ-ների մշտադիտարկման ամփոփ տվյալներ դեռևս առկա չենք:

Դատողություններ

Դրական է, որ ԳՊԲՔ-ում իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին, համահունչ են քոլեջի սահմանած առաքելությանն ու պետական կրթական չափորոշիչներին: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում աստիճանաբար անցում է կատարվել մոդուլային ծրագրերին, սակայն անհանգստացնող է, որ երբեմն մոդուլային ծրագրերում ուսումնառության ակնկալվող արդյունքները նույնական են կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ, որոնց տարանջատման պարագայում կհստակեցվեն ու կհամակարգվեն առանձին մոդուլների ակնկալվող արդյունքները՝ միասնության մեջ արտահայտելով կրթական ծրագրերի վերջնարդյունքային շրջանակը:

Գովելի է, որ քոլեջի կողմից մշակված «Մեթոդական ուղեցույց»-ում տարանջատված են դասավանդման և գնահատման մեթոդները, որի հիման վրա քոլեջի դասախոսները կիրառում են դասավանդման արդյունավետ և ուսանողակենտրոն մեթոդներ՝ միտված թիմային, խնդրակենտրոն, արդյունքահենք ուսուցմանը: Արդյունքում շեշտադրվում են ուսանողների կիրառական հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը: Ինչ վերաբերում է գնահատման համակարգին ապա դրանք դեռևս ներդրման փուլում են: Ճիշտ է, վերջնարդյունքների գնահատման համար տարբեր դասախոսներ տարբեր մեթոդներ են կիրառում, որոնք ընդհանրության մեջ միտված են վերջնարդյունքների ամբողջական ձեռքբերմանը, այդուհանդերձ, անհրաժեշտություն կա գնահատման միասնական քաղաքականության գործարկման համար, ինչը կարող է նպաստել ուսանողների գործնական կարողությունների ձեռքբերմանը: Հատկանշական է, որ արտաքին

շահակիցների՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և շրջանավարտների կարիքի հիման վրա փոխվել է ամփոփիչ ատեստավորման ձևաչափը՝ տարանջատելով տեսական և գործնական գնահատման բաղադրիչները: Արդյունքում՝ ուսանողների տեսական գիտելիքների ու գործնական կարողությունների գնահատման միջոցով համադրվում է մասնագիտական վերջնարդյունքների համապատասխանեցումը շնորհվող որակավորումներին:

Փորձագիտական խումբը դրական է համարում, քոլեջի 3 ՄԿԾ-ներում գործնական պարապմունքների գերակշիռ մասը, որոշ դասախոսություններ ու բոլոր պրակտիկաներն իրականացվում են տարածաշրջանի բժշկական հաստատություններում, որոնց թիվը շարունակաբար ավելանում է՝ նպաստելով ուսանողների կիրառական հմտությունների զարգացմանն ու աշխատանքի վրա հիմնված ուսուցման ամրապնդմանը: Գովելի է, որ ուսանողներին տրամադրվող առաջադրանքներն ու ռեֆերատները պարունակում են ստեղծագործական բաղադրիչ, համատեղ դասերի իրականացմամբ ձևավորվում են միջառարկայական կապեր՝ նպաստելով ուսանողների հետազոտական և գործնական կարողությունների զարգացմանը: Հատկանշական է, որ ուսանողների և գործատուների կարիքների հիման վրա ավելացվել են գործատուների բազաներում կազմակերպվող գործնական պարապմունքներին հատկացված ժամերը, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ավելի շատ իրական դեպքեր տեսնել և աշխատել հիվանդների հետ՝ զարգացնելով կլինիկական հմտությունները:

Թեև քոլեջն ունի կրթական ծրագրերի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, արտաքին և ներքին շահակիցների կարիքի հիման վրա իրականացվում են որոշ բարելավումներ, առկա են ՄԿԾ-ների մշտադիտարկման նպաստող որոշ մեխանիզմներ, այդուհանդերձ, համանման այլ ՄԿԾ-ների հետ համեմատական վերլուծությունների ու ՄԿԾ-ների մշտադիտարկման ամփոփ տվյալների բացակայությունը հնարավորություններ չեն ստեղծում ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման և այդ հիմքով բարելավումների իրականացման համար: Նշյալի համատեքստում կարող է վտանգվել ՄԿԾ-ների շարունակական բարելավման գործընթացը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև աշխատաշուկայի պահանջներից բխող բժշկության ոլորտի ժամանակակից հնտությունների ներդրումը համապատասխան ՄԿԾ-ներ, ինչ կբարձրացնի քոլեջի մասնագիտական գրավչությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իրականացնում է տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ՄԿԾ-ներ, որոնք համահունչ են քոլեջի սահմանած առաքելությանն ու պետական կրթական չափորոշիչներին, տարանջատված են դասավանդման և գնահատման մեթոդները, դասախոսները կիրառում են դասավանդման արդյունավետ և ուսանողակենտրոն մեթոդներ, գնահատման համակարգը միտված է վերջնարդյունքների ձեռքբերմանը, ուսումնական գործընթացում շեշտադրված են ուսանողների գործնական հմտությունների և հետազոտական կարողությունների զարգացումը, ՄԿԾ-ների բարելավման համար դուրս են բերվել ներքին և արտաքին շահակիցների կարիքները, փորձագիտական խումբը գտնում է, ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IVՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԳՊԲՔ-ն ընդունելությունն իրականացնում է ըստ «ՀՀ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ»-ի: Ընդունելությունը իրականացվում է ատեստատում առկա քիմիայի և հայոց լեզվի գնահատականների հիման վրա, ինչպես նաև «Կենսաբանություն» առարկայից բանավոր քննության արդյունքների հիման վրա: Ընդունելության քննության «Կենսաբանություն» առարկայի հարցաշարերը տեղադրվում են քոլեջի ֆեյսբուքյան էջում, ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են դիմորդի անկյունում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները քոլեջի մասին նախնական տեղեկատվությունը ստանում են քոլեջի շրջանավարտներից, նրանց ծնողներից ինչպես նաև ֆեյսբուքյան էջի միջոցով: 2023-2024 ուստարում դիմորդների թիվն ավելացել է գրեթե բոլոր մասնագիտություններով՝ 2021-2022 ուստարվա համեմատ ավելացել է շուրջ 6,5 %-ով:

Ուսանողների հավաքագրման, իրազեկման համար կազմակերպվում են «Բաց դռների օրեր», հանրակրթական դպրոցների աշակերտների կողմից ճանաչողական այցեր են կատարվում քոլեջ: Դիմորդների հավաքագրման նպատակով տեղեկատվությունը տարածվում է նաև ՋԼՄ-ների միջոցով: Քոլեջի առանձին մասնագիտություններ ներկայացնող բուկլետները լրամշակման փուլում են:

ԳՊԲՔ-ում հարցումներ են կատարվում ուսանողների, ծնողների շրջանում: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ուսանողների մասնակցությամբ կատարվում են 2-ական հարցում, որտեղ ուսանողները կարողանում են ազատ վերհանել իրենց կարիքները, առաջարկությունները և գնահատել ՊԴ կազմին: Ծնողների շրջանում հարցումները կատարվում են ուստարվա ավարտին՝պարզելու ծնողների բավարարվածությունը քոլեջի մատուցած կրթությունից: Հարցումները կատարվում են նաև քոլեջի շրջանավարտների շրջանում հասկանալու համար, թե քոլեջի տված գիտելիքները, կարողությունները ինչքանով են բավարարում աշխատաշուկայի պահանջներին:

Ուսանողների կարիքները վերհանվում են նաև ՈՒԽ-ում: ՈՒԽ-ն կառավարման խորհրդին ներկայացրել է առաջարկ, ըստ որի սահմանվել են ներքին զեղչեր 44 օրյա պատերազմում զոհված զինծառայող բարեկամ ունեցող ուսանողների համար: Ուսանողներն իրենց կարիքների վերաբերյալ ազատ դիմում են քոլեջի ուսումնական մասի վարիչին, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին, ամբիոնների վարիչներին և տնօրենին: Ուսանողները կարող են իրենց բողոքները և առաջարկությունները ներկայացնել նաև բողոքի և առաջարկությունների արկղիկի միջոցով, որը տեղադրված է քոլեջի միջանցքում:

ԳՊԲՔ-ում ամբիոնների վարիչների կողմից կազմվել է լրացուցիչ խորհրդատվությունների ժամանակացույց: Խորհրդատվությունների ժամանակ ուսանողները նախապատրաստվում են քննություններին: Բաց թողած դասաժամերը լրացնելու համար կազմակերպվում են լրացուցիչ արտալսարանային խմբային քննարկումներ: Քննարկման ընթացքում դասախոսի մասնակցությամբ ուսանողները տվյալ թեման ներկայացնում են բացակայություն ունեցող ուսանողին: Կատարվում է փոխգնահատում, որից հետո ուսանողները դասախոսի հետ միասին քննարկում են գնահատականները: Դասերը

քննարկելու նպատակով ձևավորված են նաև առցանց հարթակներ։ Բացի այդ, խորհրդատվական պարապմունքներ իրականացնելու նպատակով հրավիրյալ մասնագետներն իրենց մասնագիտական գիտելիքներով և ոլորտում առկա նորարարական գաղափարներով կիսվում են ուսանողների հետ: Օրինակ՝ քոլեջի նախկին շրջանավարտը անցկացրել է սեմինարներ՝ «Սրտի տամպոնադա», «Աղետների ժամանակ առաջին բուժօգնություն» թեմաներով, ՇՊՀ-ի դասախոսը և «Դեղագործական քիմիա» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները անցկացրել են սեմինար՝ «Ինքնախտորոշումը և առողջ սննդակարգը, որպես պատասխնատու ինքնաբուժության կարևոր բաղադրիչներ» և «Մեղվի կենսագործունության արգասիքների կիրառությունը բժշկության մեջ» թեմաներով,և այլն:

ԳՊԲՔ-ում գործում է կարիերայի կենտրոն, որը օժանդակում է շրջանավարտներին աշխատանք գտնելու հարցում և հավաքագրում է տվյալներ՝ շրջանավարտների հետ հետադարձ կապ ապահովելու նպատակով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները ստանում են աշխատանքի առաջարկներ և ավարտելուց հետով կարողանում են աշխատանքի անցնել կարճատև փորձաշրջան անցնելուց հետո:

Ուսանողներին հանձնարարվող ինքնուրույն աշխատանքները, ռեֆերատները հետազոտական բաղադրիչ են պարունակում, օրինակ՝քսուկների, դեղափոշիների, մոմիկների, հերբարիումների պատրաստումը, նոր դեղերի ստեղծումը, դեղաբույսերի դասակարգումը, դեղերի տուփերի պատրաստումը, իրավիճակային խնդիրների կազմումը, հիվանդության պատմության քույրական քարտի, ուսումնական ծննդաբերության քարտի լրացումը, պաստառների պատրաստումը: Պաստառի պատրաստման օրինակ՝ օրգանների և օրգան-համակարգերի պատկերները և դեղամիջոցների ազդեցությունները տվյալ օրգանների և օրգան-համակարգերի վրա: Դեղերի ստեղծում. օրինակ՝ ուսանողը ներրկայացրել է բուսական ծագում ունեցող դեղամիջոց, որն իր բաղադրության մեջ մտնող Կյանքի արմատի (Ժենշենի) օգնությամբ կարող է վերացնել մարդու ծուլությունը: Մեկ այլ ուսանող ներկայացրել է բուսական և քիմիական բաղադրություն ունեցող դեղամիջոց, որը բարելավում է մարդու նյարդային համակարգը՝ չառաջացնելով հոգնածություն:

Քոլեջում գործում է ՈՒԽ, որը կազմված է 11 անդամից: Ոչ բոլոր մասնագիտությունների ուսանողներն են ընդգրկված ՈՒԽ-ի կազմում: Քոլեջն ունի նոր ՈՒԽ կազմ, որի անդամներն ընտրվել են 2023-2024 ուստարվա սկզբին՝ ուսանողների քվեարկությամբ: Առկա է ՈՒԽ ուղեցույց, որը ընդգրկում է 4 հանձնաժողովներ՝ մարզական, ուսումնակրթական, սոցիալական և ազատ ժամանցի: ՈՒԽ նախագահը նաև Կառավարման խորհդի անդամ է: Քոլեջի ուսանողները քիչ են տեղեկացված ՈՒԽ-ի գործունեությունից, այդ նպատակով այս ուսումնական տարվա ընթացքում ՈՒԽ-ի կողմից որակի պատասխանատուի օժանդակությամբ կազմակերպվել են շրջայցեր լսարաններով, որտեղ ուսանողներին ծանոթացրել են ուսանողի ուղեցույցին: Ուղեցույցում ներկայացված են ուսանողի իրավունքները, պարտականությունները, խրախուսումը, հեռացումը, ներքին կարգապահական կանոնները, գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն ուստարվա սկզբին հանդես է եկել ողջույնի խոսքով և պլանավորում է շատ միջոցառումներ կազմակերպել:

Ամբիոնի նիստերում ամբիոնների վարիչները և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը իրականացնում են քննաշրջանի արդյունքների վերլուծություն, որոնք ներկայացվում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տարբերակով: Դիտարկվում են նաև առաջարկությունների արկղիկի առաջարկությունները: Ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատումը

կատարվում է հարցումների միջոցով, ամբիոնների վարիչների հաշվետվություններով և դասալսումների միջոցով: Իրականացված գնահատումները ամփոփված և համակարգված չեն:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են ուսանողների ընդունելության և հավաքագրման հստակ մեխանիզմներ: Գովելի է այն փաստը, որ քոլեջում ընթանում են դիմորդների ներգրավման համար աշխատանքներ, որի արդյունքում դիմորդների թիվը շարունակաբար աճում է:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԳՊԲՔ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման և դրանց լուծման համար իրականացվում են աշխատանքներ, մասնավորապես՝ քոլեջի կառավարման խորհուրդի կազմում ընդգրկված են ուսանողներ, ինչը նպաստում է ուսանողների խնդիրների վերհանմանը և այդ խնիդիրների համապատասխան արձագանքմանը, բացի այդ, քոլեջում կազմակերպված հարցումների միջոցով որոշ խնդիրներ ստանում են իրենց լուծումները:

Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջում իրականացվում են լրացուցիչ և խորհրդատվական պարապմունքներ՝ ըստ կազմված ժամանակացույցի: Ողջունելի է այն փաստը, որ բաց թողնված դասերը լրացվում են մյուս ուսանողների ներկայությամբ և փոխգնահատման միջոցով:

Փորձագիտական խումբն արժևորում է քոլեջում իրականացվող վարպետաց դասերը, սեմինարները, գործնական դասերը, որոնք անցկացվում են քոլեջի շրջանավարտների և գործընկերների կողմից՝ նպաստելով ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու մասնագիտական գրավչության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում կարիերայի կենտրոնի առկայությունը, որի աշխատանքներն ուղղված են ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև կապի ամրապնդմանը: Դրական է նաև այն փաստը, որ կարիերայի կենտրոնը ապահովում է հետադարձ կապ շրջանավարտների հետ՝ ներգրավելով նրանց կրթական գործընթացներում և մշտապես իրազեկված լինելով աշխատաշուկայի կարիքների մասին:

Գովելի է, որ ԳՊԲՔ-ում ուսանողներին տրամադրվում են հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ, որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական հմտությունների ու ստեղծագործ մտածելակերպի զարգացմանը:

Դրական է, որ քոլեջում գործող ՈԻԽ-ն որոշակի մասնակցություն ունի ուսանողների կարիքների վերհանման աշխատանքներին, քոլեջում առկա գործընթացներին և կազմակերպչական աշխատանքներին: Միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ ՈԻԽ-ի կազմում ընդգրկված չեն «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները, ինչը կարող է խոչընդոտել տվյալ մասնագիտության ինտեգրմանը քոլեջի ուսանողական միջավայրին: Բացի այդ, քոլեջի ուսանողները քիչ են տեղեկացված ՈԻԽ-ի և ՈԱ կենտրոնի գործունեությունից, և փորձագիտական խումբը գտնում է, որ ՈԻԽ-ի և ՈԱ կենտրոնի համագործակցությունը կնպաստի ուսանողների իրազեկվածության բարձրացմանն ու կրթական կարիքների վերհանման, ամփոփման գործընթացների լավարկմանը:

Դրական է գնահատվում, որ իրականացվում են քննաշրջանի արդյունքների վերլուծություն, կատարվում են դասալսումներ, դիտարկվում են առաջարկությունների արկղիկի առաջարկությունները, ինչը նպաստում է ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատմանը, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ վերը նշյալ գործընթացների

ամփոփումն ու համակարգումը կընդգծեն բարելավման ենթակա առանցքային խնդիրները և կօժանդակեն իրականացվող բարելավումներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների ընդունելության, ընտրության և հավաքագրման հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման և դրանց լուծման համար իրականացվում են աշխատանքներ, կազմակերպվում են լրացուցիչ և խորհրդատվական պարապմունքներ, գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, ուսանողներին տրամադրվում են մասնագիտական հմտություններն ու ստեղծագործ մտածելակերպը զարգացնող հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ, ՈՒԽ-ն որոշակի մասնակցություն ունի ուսանողների կարիքների վերհանման աշխատանքներին, փորձագիտական խումբը գտնում է, ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջում ՊԴ կազմի համալրման և ընտրության գործընթացները կարգավորվում են «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգով, պաշտոնի անձնագրերով, իսկ մրցույթի վերաբերյալ հրապարակումը իրականացվում է մամուլի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շատ հաճախ քոլեջում դասավանդելու նոր մասնագետներին երաշխավորում են գործատուները: Պարզ դարձավ նաև, որ 2023-2024 ուստարվա համար Գյումրու ԲԿ-ի տնօրենի առաջարկով և երաշխավորությամբ «Քույրական գործ» կրթական ծրագրի շրջանակում դասավանդում է կենտրոնի գլխավոր բուժքույրը:

ՊԴ կազմում ներգրավված են 95 դասախոս, որից 34-ը՝ հիմնական, 61-ը՝ համատեղությամբ: Քոլեջի դասախոսների զգալի մասը՝ շուրջ 45,3%-ը, գործող բժիշկ-դասախոսներ են: Քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող 5 դասախոս: Վերջին 2 տարում ավելացել է երիտասարդ դասախոսների քանակը, որոնց թվում են նաև քոլեջի շրջանավարտները:

Քոլեջը կարևորում է դասախոսների մասնագիտական կարողությունները: Բոլոր ՄԿԾ-ներում նշված են դասավանդողներին ներկայացվող պահանջները: ՊԴ կազմի ընտրությունը կատարվում է Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ով: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բոլոր դասախոսների որակավորումները համապատասխանում են իրենց կողմից դասավանդվող դասընթացներին:

Քոլեջը մշակել է «Գյումրու պետական բժշկական քոլեջի ուսումնական մասի, ամբիոնի, դասախոսական կազմի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման կարգ», ըստ որի դասախոսներին տրվող արդյունարար վարկանիշը ձևավորվում է ուսանողների գնահատումների, ամբիոնի կողմից տրված գնահատականի և սահմանված ժամանակահատվածի

համար դասախոսի ծավալած գործունեության հիման վրա։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարկանիշի ձևավորման հիմքում դրված է միայն ուսանողների գնահատումը։ Հարկ է նշել, որ ձևավորված վարկանիշը որևէ արդյունքային ազդեցություն չունի դասախոսի գործունեության վրա։ Դասախոսների խրախուսման մեխանիզմներ ներդրված չեն քոլեջում։

Քոլեջի ամբիոնները պարբերաբար պլանավորում և իրականացնում են փոխադարձ դասալսումներ և բաց դասեր։ Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ, որտեղ կարևորվում են դասավանդման մեթոդները, նյութի մատուցման եղանակները, նոր մեթոդներով դասավանդման լավ փորձի բացահայտումը և տարածումը։ Դասախոսների գնահատումն իրականացվում է կիսամյակային կտրվածքով՝ «Դասախոսը և առարկան ուսանողի աչքերով» հարցումների միջոցով: Հարցումներ են իրականացվում նաև դասախոսների շրջանում կարիքների վերհանման նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դուրս բերված խնդիրների վերաբերյալ քննարկումներն ու առաջարկությունների ներկայացվում են բանավոր, բացակայում են որակական վերլուծություններն ու ամփոփումները։ Քոլեջի ՊԴ կազմը պարբերաբար մասնակցում է մեթոդական հմտությունների բարելավմանը միտված ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին։ Մասնագիտական բնույթի այլ վերապատրաստումներ չեն իրականացվում։ Քոլեջի առաջարկությամբ դասախոսները մասնակցում են «Գյումրու Ամերիկյան անկյուն» մշակութային և տեղեկատվական կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող անվճար անգլերեն դասընթացների՝ դասախոսների անգլերեն լեզվի իմացությունը բարելավելու ուղղությամբ։

Քոլեջը, որպես ՊԴ կազմի կայունության ապահովման հիմնական սկզբունք, կարևորում է երիտասարդ, պրակտիկ մասնագետների ներգրավումը և կազմակերպում է նրանց մանկավարժական ու մեթոդական աջակցություն ցուցաբերելու գործընթացը։ Օրինակ՝ ամբոնների վարիչների, մեթոդիստի և մանկավարժական երկարատև փորձ ունեցող դասախոսների կողմից սկսնակ դասախոսների համար քոլեջում իրականացվում են մեթոդական և մանկավարժական ներքին վերապատրաստումներ, որպես օրինակ ծանոթացնում են մոդուլային ծրագրերին, դասի մեթոդաբանությանը, ուսանողների գնահատման մեխանիզմներին, որից հետո կազմակերպում են դասալսումներ և խորհրդատվություններ՝ խնդրի բացահայտման դեպքում ներկայացնելով դասի բարելավման առաջարկություններ:

Կրթական գործընթացի կազմակերպման համար քոլեջում առկա են անհրաժեշտ վարչական աշխատողներ (ուսումնական հարցերով փոխտնօրեն, դաստիարակության հարցերով փոխտնօրեն, կադրերի տեսուչ, ուսումնական մասի վարիչ, պրակտիկայի ղեկավար, մեթոդիստ, գրադանավավար, արխիվավար և այլն) և ուսումնաօժանդակ աշխատակիցներ (5 լաբորանտ, գործավար, բուժքույր)։ Վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների աշխատանքի, ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գնահատման և առկա խնդիրները բացահայտելու նպատակով ուսանողների շրջնում կազմակերպում են հարցումներ, որոնք ևս քննարկվում են բանավոր կարգով և համապատասխան վերլուծություններ առկա չեն։ Քոլեջը ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատումներ դեռևս չի իրականացրել։

Դատողություններ

Դրական է, որ քոլեջում ՄԿԾ-ներն իրականացնելու համար գործում է անհրաժեշտ որակավորումներ ունեցող ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն, քոլեջի բոլոր դասախոսների որակավորումները համարժեք են նրանց կողմից դասավանդվող մոդուլներին։ Ի

հավելումն՝ նոր դասավանդողներ կարող են առաջարկվել և երաշխավորվել գործատուների կողմից, որը նպաստում է քոլեջ-գործատու կապի ամրապնդմանը և գործատուների շարունակական ներգրավվածությանը դասավանդման մեջ։

Գովելի է, որ ՊԴ կազմի շուրջ 45,3% ներկայացվածություն ապահովում են բժիշկ-դասախոսները, որոնք ուսանողներին գործնական հմտություններ են փոխանցում նաև իրենց աշխատանքի վայրերում՝ օժանդակելով քոլեջ-գործատու արդյունավետ համագործակցության ամրապնդմանը։ Դրական միտում է, որ քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող դասախոսներ և քոլեջը որդեգրել է ՊԴ կազմի աստիճանական երիտասարդացման քաղաքականություն՝ նպաստելով քոլեջի կրթական գործընթացների արդյունավետության բարձրացմանը։

Չնայած որ քոլեջը մշակել է դասախոսական կազմի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման կարգ, որի բաղադրիչներն են՝ ուսանողների գնահատումները, ամբիոնի գնահատականը և սահմանված ժամանակահատվածում դասախոսի ծավալած գործունեության արդյունքները, այդուհանդերձ, քոլեջի ներկա գործընթացներում դասախոսի վարկանիշը ձևավորվում է միայն ուսանողների գնահատումով, ինչը չի կարող դասախոսների վարկանիշի ձևավորման ամբողջական բաղադրիչ հանդիսանալ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ հստակ և բազմագործոն բաղադրիչների հիմքով մշակված վարկանիշավորման կարգը և դասախոսների խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող են էապես բարելավել ՊԴ կազմի գործունեությունը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում պարբերաբար իրականացնում են փոխադարձ դասալսումներ և բաց դասեր, որոնց արդյունքները քննարկվում են դասախոսների հետ՝ կարևորելով դասավանդման նորարարական մոտեցումները, դասավանդման լավ փորձի բացահայտումը և տարածումը։ Արդյունքում՝ փորձի փոխանակման ձևավորված հարթակը նպաստում է քոլեջում դասավանդման մեթոդների կատարելագործմանն ու լավարկմանը։ Թեև կիսամյակային կտրվածքով հարցումների միջոցով իրականացվում են դասախոսների գնահատումներ, բայց այդ հարցումները չեն վերլուծվում և ներդրվում բարելավման գործողություններում։ Նշյալը կարող է խոչընդոտել բարելավման ենթակա խնդիրների դուրսբերմանը։

Խրախուսելի է, որ սկսնակ դասախոսների համար ամբոնների վարիչներն և փորձառու դասախոսները իրականացնում են մեթոդական և մանկավարժական ներքին վերապատրաստումներ՝ նպաստելով դասախոսական կազմում նրանց արագ ինտեգրվելուն և մասնագիտական արդյունավետ գործունեություն ծավալելուն։ Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ բացի ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված մեթոդական վերապատրաստումներից, քոլեջն այլ մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումներ չի իրականացնում, ինչը կարող էր նպաստել դասախոսների մասնագիտական որակավորումների բարձրացմանը։

Հարկ է նշել, որ քոլեջի կողմից ներգրավված վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներն իրենց գործառույթների իրականացման շրջանակում սպասարկում են ուսումնական գործընթացը՝ նպաստելով քոլեջի կրթական գործընթացների անխաթար կազմակերպմանը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ քոլեջն իր ՄԿԾ-ների իրականացման համար ունի անհրաժեշտ և մասնագիտական որակավորումներ ունեցող ՊԴ կազմ, կրթական գործընթացների անխաթար իրականացման համար վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ, ՊԴ կազմում զգալի ներկայացվածություն ունեն բժիշկ-դասախոսները, ձևավորվել է քոլեջ-գործատու մասնակցային

կրթական միջավայր, դասախոսների միջև ձևավորվել է փորձի փոխանակման և լավ փորձի տարածման հարթակ, քոլեջը որդեգրել է ՊԴ կազմի աստիճանական երիտասարդացման քաղաքականություն, գործում են սկսնակ դասախոսներին կրթական գործընթացներին ներգրավելու մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Քոլեջի ՌԾ-ով ամրագրված է, որ քոլեջի գործունեության սկզբունքները միտված են ստեղծագործ մոտեցումների, նորամուծությունների, ուսանողական նախաձեռնությունների, կամավորության, ստեղծագործական և կատարողական արդյունքների հանրայնացմանն ու դրանց խթանմանը: Այդքանով հանդերձ, քոլեջի հետազոտական նպատակները մանրամասնված չեն երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում, զուգահեռաբար՝ հետազոտական գործունեությանը միտված գործողություններն ու քոլեջի աշխատանքային սկզբունքները արտահայտված են ամբիոնների վարիչների աշխատանքային պլաններում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջն ունի հաջողություններ հետազոտության ոլորտում՝ կան գիտական աստիճան ունեցող դասախոսներ, առկա են տպագրած նյութեր և ձեռնարկներ, դասախոսները հանձնարարում են ուսանողներին ռեֆերատներ և ինքնուրույն աշխատանքներ, որոնք հետազոտական/ստեղծագործական բաղադրիչ են պարունակում:

Քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող 5 դասախոս, որոնք թվով 19 գիտական հրապարակումներ ունեն: Որպես օրինակ վերջին հրապարակումներից կարելի է առանձնացնել՝ «Թունաբանական քիմիա», «Ինֆեկցիոն հիվանդությունների և կենսանվտանգության հիմնահարցերը» ուսումնական ձեռնարկները, որոնք, որպես ուսումնառության նյութ, ներդրված են համապատասխան ՄԿԾ-ներում:

Քոլեջում առկա են ուսանողների ստեղծագործական, վերլուծական աշխատանքներ ռեֆերատների, խնդիրների, պաստառների ձևաչափով: Լավագույն աշխատանքները խրախուսվում են պատվոգրերով, շնորհակալական խոսքով: «Դեղագործություն» մասնագիտությունում առկա են հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ, օրինակ՝ նոր դեղերի ստեղծում, հերբարիումների, դեղաբույսերի դասակարգում, դեղերի տուփերի պատրաստում, ռեֆերատներ (օրինակ՝ Ֆլավոնոիդներ պարունակող դեղաբույսեր և հումք): «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակում ուսանողներին առաջադրանք է տրվում առանձնացնել դեղերը ըստ տարբեր խմբերի (ցավազրկող, խորխաբեր, հակաալերգիկ և այլն) և վերլուծել դրանց ազդեցությունը, կողմնակի էֆեկտները, հակացուցումները՝ օգտվելով համացանցային աղբյուրներից: «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները հնարավորություն ունեն կատարել հետազոտական աշխատանք դեղատներում և լաբորատորիաներում: «Քույրական գործ» մասնագիտության հետազոտական, ստեղծագործական բաղադրիչ պարունակող աշխատանքներն են՝ իրավիճակային խնդիրների

կազմումը, ռեֆերատները, հիվանդության պատմության քույրական քարտի, ուսումնական ծննդաբերության քարտի լրացումը, պաստառների պատրաստումը («Սրտի արատներ», «Շաքարային դիաբետ»), ուսուցողական դասախոսությունները (օրինակ՝ Բեյբի Հաուս զարգացման կենտրոնում «Մարսողական համակարգի գաղտնիքները և հիգիենայի կանոնների պահպանման կարևորությունը» թեմայով)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների բազաներում և լաբորատորիաներում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրել և վերլուծել իրական դեպքեր:

Դատողություններ

Դրական դիտարկում է, որ քոլեջի հետազոտական գործունեությանը միտված գործողություններն արտահայտված են ամբիոնների վարիչների աշխատանքային պլաններում, և քոլեջն ունի հաջողություններ հետազոտական գործունեության մեջ, սակայն միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ քոլեջի հետազոտական ուղղությունները թիրախավորված չեն երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում, ինչ կարող է խոչընդոտել հետազոտության հետագա զարգացումը։

Գովելի է, որ քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող դասախոսներ, որոնց տպագրած նյութերն ու ձեռնարկները կիրառվում են ՄԿԾ-ներում որպես ուսումնառության նյութեր՝ նպաստելով ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են ուսանողների ստեղծագործական աշխատանքներ ռեֆերատներ, խնդիրներ, պաստառներ և լավագույն աշխատանքները խրախուսվում են պատվոգրերով, շնորհակալական խոսքով։ Գովելի է, որ դիտարկվող 3 մասնագիտություններում ներդրված ռեֆերատները, աշխատանքները, ուսումնասիրությունները, վերլուծական աշխատանքները հետազոտական/ստեղծագործական բաղադրիչ են պարունակում՝ նպաստելով ուսանողների հետազոտական մտածելակերպի զարգացմանը։

Խրախուսելի է, որ գործատուների բազաներում և լաբորատորիաներում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրել և վերլուծել իրական դեպքեր, գործատու-դասախոսների հետ իրականացվում են համատեղ դասեր, որի արդյունքում ձևավորվում են կիրառական և հետազոտական հմտություններ։ Դրական է նաև, որ նշյալի համատեքստում քոլեջն ընդլայնում և խորացնում է գործատուների հետ համագործակցությունը՝ նպաստելով աշխատանքի վրա հիմնված ուսուցում կազմակերպմանն ու ուսանողների գործնական և հետազոտական կարողությունների զարգացմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊԲՔ-ն ունի հաջողություններ հետազոտական գործունեության իրականացման գործընթացում, մասնավորապես՝ քոլեջում դասավանդում են գիտական աստիճան ունեցող դասախոսներ, ներդրված են ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմներ, առկա են ուսանողների հետազոտական մտածելակերպը զարգացնող աշխատանքներ, գործատուների բազաներում և լաբորատորիաներում ձևավորվում են կիրառական և հետազոտական հմտություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է բավարար։

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի շենքը զբաղեցնում է 1922,33 քմ տարածք, այն կառուցվել է 1935թ.-ին, որպես ուսումնական հաստատություն: Այնուհետև կցակառուցվել է երկհարկանի հատվածը և առ այսօր շինությունը կապիտալ վերանորոգման չի ենթարկվել: Քոլեջն ունի 5 լաբորատորիա՝ Մարդու անատոմիայի, Ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի, Վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, Դեղաբանության, բուսաբանության և ֆարմակագնոզիայի, Ատամնատեխնիկական, Հանրակրթական ծրագրերի: Առկա են նաև 11 կաբինետ-լաբորատորիաներ, որոնք գործարկվում են որպես լսարաններ: Կաբինետ-լաբորատորիաները համալրված են ուսումնական գույքով և պարագաներով: Հարկ է նշել, որ առկա գույքը և մուլյաժները հին են, կան նաև նոր մուլյաժներ՝ ձեռք բերված քոլեջի միջոցներով և գործընկերների նվիրատվությունների հաշվին: Գործնական դասընթացների համար անհրաժեշտ նյութերը և բժշկական պարագաները ևս ձեռք են բերվում քոլեջի կամ գործընկերների միջոցներով: Քոլեջի սպորտդահլիճը բարվոք վիճակում չէ, դահլիճը մասմաբ վերանորոգվել և կահավորվել է: Համակարգչային կաբինետն ունի 10 համակարգիչ, որոնցից 2-ը նախորդ տարի ձեռք է բերվել քոլեջի արտաբյուջեի հաշվի, 8 համակարգիչները տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն: Քոլեջի գրադարանում առկա մասնագիտական գրականությունը բավարարում է ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Բացի այդ, 2022թ-ից ներդրվել է էլեկտրոնային գրադարանը, որտեղ ուսանողներն ու դասախոսները գրքերը կարող են ներբեռնել QR կոդի միջոցով: Քոլեջն ունի ջեռուցման համակարգ, բուֆետ առկա չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին տարիներին քոլեջն իր արտաբյուջեի հաշվին համալրել է նյութատեխնիկական ռեսուրսները, մասնակի վերանորոգել է 2-րդ հարկի միջանցքի հատակը, որոշ լսարաններ:

ԳՊԲՔ-ի 2023թ. շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության հետազննության արդյունքներով քոլեջի շենքի կրող տարրերի վնասվածությունը հին մասնաշենքի համար գնահատվում է երկրորդ-երրորդ աստիճանի, կցակառույց հատվածի համար՝ երկրորդ աստիճանի: Կրող համակարգի տեխնիկական վիճակը, որպես ուսումնական հաստատություն, համարվում է անբավարար: Ըստ եզրակացության, կառույցի նորմալ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է կրող համակարգը բերել գործառնական նշանակությանը համապատասխան սեյսմազինվածության մակարդակի, պետք է իրականացվի շինարարական աշխատանքների միջոցառումների համալիր՝ ուղղված շենքի կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանը: Տեխնիկական վիճակի եզրակացությամբ առաջարկվել է 13 միջոցառում, որոնք ծախսատար են և զգալի ներդրումներ են պահանջում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջին «Բուժական կոսմետոլոգիա» ՄԿԾ-ն ներդնելու լիցենզիան չի տրամադրվել՝ ռեսուրսային բազայի անբավարարության պատճառով: Բացի այդ, ուսանողների թվաքանակի ավելացմանը զուգընթաց, լսարանային ֆոնդը ևս կարող է չբավարարել: Քոլեջի եկամուտները սահմանափակ են, ձևավորվում են պետական ֆինանսավորման հաշվին և ուսման վարձավճարներից: Փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում քոլեջը պետության կամ այլ գործընկերների մասնակցությամբ հստակ ներդրումային ծրագիր դեռևս չուներ:

ԳՊԲՔ-ի 2023թ. ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով ընթացիկ եկամուտների շուրջ 55%-ը ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհներն են, 45%-ը կազմում են ուսման վարձավճարներից մուտքերը: Համեմատելով 2022թ. տվյալների հետ, ուր պետական ֆինանսավորում-ուսման վարձավճարներ համամասնությունը կազմում է 62,5%-37,5%, ակնառու է, որ ավելացել են ուսման վարձավճարներից մուտքերը՝ ի հաշիվ վճարովի համակարգում սովորող ուսանողների թվաքանակի ավելացման: Քոլեջի բյուջեի ծախսային հոդվածների համամասնությունը հետևյալն է՝ ընթացիկ ծախսերը կազմում են 98%, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ շուրջ 2%: Ընթացիկ ծախսերում գերակշիռ մաս է կազմում աշխատանքի վարձատրության ֆոնդը՝ 82%: 11,5% չափով ծախսային հոդված է նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար, մնացած՝ 6,5%-ը բաշխվում է այլ ծախսային հոդվածների միջև: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության հիմքում քոլեջը առաջնային խնդիր է դրել ազատ դրամական միջոցներն ուղղել շենքային պայմանների բարելավմանը, բազմազանեցնել ֆինանսավորման աղբյուրները: Հարկ է նշել, որ 2022թ. քոլեջը դիմել է Էրազմուս+ ծրագրին և շահել դրամշանորհային ծրագիր Ատամնատեխնիկական գործ ՄԿԾ-ի համար:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ էլեկտրոնային նամակագրության միջոցով:

Քոլեջն ունի պահակակետ, անվտանգության աշխատակից, բուժկետ, բուժքրոջ հաստիք, քաղաքացիական պաշտպանության պլան՝ համաձայնեցված ՀՀ ՆԳՆ Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ: Միջանցքներում, բոլոր կաբինետ-լաբորատորիաներում առկա են տարհանման սխեմաներ, լաբորատորիաներում պահպանվում են անվտանգության կանոնները: Քոլեջի տարածքում ներդրված է հակահրդեհային համակարգ: Շենքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար, թեքահարթակը բացակայում է: Քոլեջը գնահատել է իր ռեսուրսային բազան, և իրականացված հարցման արդյունքներով ուսումնառողների 42%-ն է բավարարված ռեսուրսների ապահովվածությունից, իսկ դասավանդողների՝ 58%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է գործընկեր բժշկական կազմակերպությունների հետ և իրականացնում է ռեսուրսների համատեղ կիրառման քաղաքականություն, մասնավորաբար՝ բոլոր ՄԿԾ-ների գործնական պարապմունքներն իրականացվում են գործատուների արդի և լաբորատոր սարքավորումներով հագեցած բազաներում:

Դատողություններ

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ 2023թ. շենքի տեխնիկական վիճակի եզրակացության հետազննության արդյունքներով ԳՊԲՔ-ի շենքի տեխնիկական վիճակը, որպես ուսումնական հաստատություն, համարվում է անբավարար, ուստի վտանգվում է քոլեջում անվտանագ ուսումնական միջավայրը:

Հաշվի առնելով, որ շենքի կառուցվածքի հուսալիության ապահովման ու արդիականացման համար, տեխնիկական վիճակի եզրակացությամբ առաջարկվող միջոցառումները զգալի ֆինանսավորում են պահանջում, ինչը քոլեջի ունեցած բյուջեի պարագայում անհնար է իրականացնել: Նշյալով պայմանավորված՝ փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջն իր առջև ծառացած մարտահրավերը առանց պետության, մասնավոր հատվածի կամ դոնոր կազմակերպությունների օժանդակության չի կարող հաղթահարել: Այդքանով հանդերձ, փորձագիտական խմբի կողմից բարձր են գնահատավում քոլեջի ներդրած ջանքերը՝ միտված ռեսուրսային բազայի համալրմանը, ձևավորված սահմանափակ արտաբյուջեի հաշվին շենքային

պայմանների բարելավմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբն անհանգստացնող է համարում այն հանգամանքը, որ քոլեջը տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համահունչ դիմել է նոր ՄԿԾ-ներ ներդնելու համար, սակայն ռեսուրսային բազան չբավարարելու պատճառով լիցենզիա չի տրամադրվել: Հետևապես, շենքային պայմանների բարելավումը և շինության կապիտալ վերանորգման աշխատանքների իրականացումը քոլեջի համար անհետաձգելի և հրատապ խնդիր է, որի լուծմամբ է պայմանավորված քոլեջի կրթական գործընթացների անխաթար իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ տարվա համեմատ 2023թ. ԳՊԲՔ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով ընթացիկ եկամուտների կազմում շուրջ 7,5%-ով ավելացել են ուսման վարձավճարներից մուտքերը՝ կազմելով ընդամենը եկամուտների 45%-ը: Վերոնշյալը վկայում է վճարովի համակարգում սովորող ուսանողների թվաքանակի ավելացման մասին, ինչի արդյունքում պետության ծախսային բեռի թեթևացում է տեղի ունեցել՝ 62,5%-ից նվազելով 55%-ի: Ինչ վերաբերում է քոլեջի ծախսերի կառավարմանը, ապա նշյալի համատեքստում փորձագիտական խումբն ունի այն մտահոգությունը, որ ծախսային հոդվածների գերակշիռ մասը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին և ուսումնական, հետազոտական բնույթի միջոցառումների ֆինանսավորման համար դրամական միջոցներ չեն ազատվում, ինչը կարող է կասեցնել քոլեջի հետագա զարգացումը: Զուգահեռաբար՝ դրական դիտարկում է, որ քոլեջը ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության հիմքում առաջնային խնդիր է համարում ազատ դրամական միջոցների ուղղորդումը շենքային պայամանների բարելավմանը, ֆինանսավորման նոր աղբյուրների բացահայտումը, ինչի արդյունքում քոլեջը դիմել և շահել է Էրազմուս + ծրագիրը:

Փորձագիտական խումբը մի կողմից մտահոգիչ է համարում, որ քոլեջի կաբինետ-լաբորատորիաները հագեցած չեն ժամանակակից գույքով, սարքավորումներով և արդի բժշկական պարագաներով, մյուս կողմից էլ՝ հարկ է ընդգծել, որ քոլեջը տարածաշրջանի գործընկեր բժշկական կազմակերպությունների հետ իրականացնում է ռեսուրսային բազայի համատեղ կիրառման քաղաքականություն, որի արդյունքում ՄԿԾ-ների գործնական պարապմունքներն իրականացվում են գործատուների արդի և հագեցած լաբորատոր բազաներում: Արդյունքում թիրախավորվում է ուսանողների գործնական հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը:

Դրական է գնահատվում, որ քոլեջը ներդրել է QR կոդով գործարկվող էլեկտրոնային գրադարան, որը կարող է նպաստել վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Քոլեջում գործող առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները որոշակիորեն նվազեցնում են անվտանգային ռիսկը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊԲՔ-ի շենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, առկա է սեյսմազինվածության մակարդակի բարձրացման և անհապաղ շինարարական աշխատանքների իրականացման խնդիր, քոլեջը չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ և գործընկերների մասնակցությամբ ներդրումային ծրագիր, քոլեջում անվտանգ ուսումնական միջավայրը գնահատվում է բարձր ռիսկային, կաբինետ-լաբորատորիաներում առկա մասնագիտական գույքն ու պարագաները բավարար չեն գործնական հմտությունների և կարողությունների ամբողջական ձևավորման համար, խոչընդոտվում է աշխատաշուկայում պահանջարկ ունեցող ՄԿԾ-ների ներդրումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊԲՔ-ն չի բավարարում չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է անբավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

2022թ. քոլեջը մշակել է «Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգ», ուր ներկայացված են հաշվետվողականության ապահովման նպատակը, ձևերը, առանձնացված են քոլեջի ներքին և արտաքին շահակիցները: Ընթացակարգով սահմանվում են քոլեջի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեթոդների և մեխանիզմների նկատմամբ ընդհանուր պահանջները և հաշվետվողականության փուլերը: Ընթացակարգը համարվում է որակի ապահովման բաղադրիչ և նշյալ պահանջները պարտադիր են բոլոր ստորաբաժանումների համար: Ընթացակարգով քոլեջի հաշվետվողականության ապահովման նպատակներից է՝ տարանջատել հաշվետվողականությունն ըստ ներքին և արտաքին օգտագործողների խմբերի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընթացակարգի գործողության 1 տարվա ընթացքում դեռևս հաշվետվությունները նման տարանջատում չունեն: Քոլեջը ձևավորել է ներքին հաշվետվողականության համակարգ, առկա են տնօրենի, փոխտնօրենների, ամբիոնների վարիչների, որակի պատասխանատուի, կարիերայի պատասխանատուի, պրակտիկայի ղեկավարի տարեկան հաշվետվությունները: Հարկ է նշել, որ հաշվետվությունները պարունակում են հիմնականում քանակական վերլուծություններ, որակական վերլուծություններն ամփոփված չեն և ընդգծված չեն բարելավման ենթակա խնդիրները: Քոլեջը հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ Շիրակի մարզպետարան և այլ գերատեսչություններ:

Քոլեջն ունի կայքէջ, որը դեռևս ներդրման փուլում է: Քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում: Քոլեջի կողմից ընդունելության վերաբերյալ հայտարարություններ են տրվում թերթերում, համագործակցում են ԶԼՄ-ների հետ:

Քոլեջում արտաքին շահակիցների հետ հետադարձ կապն ապահովվում է ծնողական ժողովների, գործատուների հետ հանդիպում-քննարկումների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներից տվյալների հավաքագրման, գործատու-դասախոսներ ներգրավելու միջոցով: Քոլեջում առկա է առաջարկությունների և բողոքների արկղիկ, որի միջոցով ներքին շահակիցները ցանկացած խնդիր կամ կարծիք կարող են փոխանցել անանուն ձևաչափով:

Փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում «Դեղագործություն» մասնագիտության ուսանողների ու դասախոսների կողմից դեղագործների օրվան նվիրված միջոցառում էր կազմակերպվել, որի ընթացքում փոխկապակցվեցին դեղաբանություն, բուսաբանություն, քիմիա, ֆարմակոլոգիա առարկաները՝ ուսանողները կատարեցին քիմիական փորձեր, տեղում պատրաստեցին կոսմետիկ միջոցներ, ներկայացրին որոշ դեղաբույսեր, պատմեցին դեղագործի մասնագիտության մասին:

Քոլեջը համագործակցում է բժշկական հաստատությունների, հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների, շտապօգնության կայանի հետ, ուր քոլեջի ուսանողները կամավորական բնույթի աշխատանքներ են իրականացնում: Քոլեջում պարբերաբար կազմակերպվում են սոցիալական նշանակության միջոցառումներ (օրինակ՝ շաբաթօրյակներ):

«Քույրական գործ» մասնագիտության ուսանողները այցելում են ծերանոց և «Կարիտաս» բարեսիրական կազմակերպության հետ «Տնային խնամք ծերերին» ծրագրի շրջանակներում մասնակցում են ծերերի խնամքին: «Քույրական գործ» մասնագիտության ամբիոնի վարիչն ու ուսանողները 2023թ. «Բեյբի հաուս» զարգացման կենտրոնում իրականացրել են ուսուցանող դաս՝ «Մարսողական համակարգի գաղտնիքները և հիգիենայի կանոնների պահպանման կարևորությունը» թեմայով:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կողմից մշակված Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգով սահմանվում են հաշվետվողականության ապահովման նպատակը, ձևերը, առանձնացված են քոլեջի ներքին և արտաքին շահակիցները: Գովելի է, որ քոլեջը նպատակ ունի տարանջատել հաշվետվողականությունն ըստ օգտագործողների խմբերի, սակայն ընթացակարգի գործողության 1 տարվա ընթացքում դեռևս տարանջատված հաշվետվություններ առկա չեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին և ներքին օգտագործողների համար տարանջատված հաշվետվությունները էապես կբարձրացնեն քոլեջի գործունեության արդյունավետությունը:

Գովելի է, որ քոլեջը ձևավորել է ներքին հաշվետվողականության համակարգ, սակայն առկա հաշվետվությունները պարունակում են հիմնականում քանակական վերլուծություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ հաշվետվություններում որակական վերլուծությունների ներառումը և բարելավման ենթակա խնդիրների շեշտադրումը առաջընթաց կապահովեն քոլեջի բոլոր ուղղություններում:

Դրական է, որ քոլեջն ունի հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում հասանելի է քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը: Հավելելով՝ քոլեջի կայքէջը ներդրման փուլում է, և փորձագիտական խմբի դիտարկմամբ հետադարձ կապի մեխանիզմները կգործարկվեն նաև կայքէջի միջոցով:

Ծնողական ժողովների, գործատուների հետ հանդիպում-քննարկումների իրականացման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներից տվյալների հավաքագրման, գործատու-դասախոսների ներգրավման արդյունքում քոլեջին հաջողվել է ձևավորել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման կայուն մեխանիզմներ, ինչը դրական անդրադարձ է ունեցել քոլեջի կրթական և կառավարչական գործընթացների բարելավման վրա:

Խրախուսելի է, որ բժշկական հաստատությունների, հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների, շտապօգնության կայանի հետ համագործակցությունների շրջանակում քոլեջի ուսանողները կամավորական բնույթի աշխատանքներ են իրականացնում, մասնակցում են ծերերի խնամքին, իրականացվում են ուսուցանող դասեր՝ նպաստելով քոլեջի դրական վարկանիշի ձևավորմանն ու իրազեկվածության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը խրախուսում է տարատեսակ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, բաց է քոլեջի գործունեությամբ հետաքրքրված կառույցների և մարդկանց համար՝ ապահովելով կրթական միջավայրի հասանելիությունն ու հրապարակայնությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊԲՔ-ն ունի Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգ, առկա են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, ձևավորվել է արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման կայուն մեխանիզմներ, շահակիցների համար ապահովված է

կրթական միջավայրի հասանելիությունն ու հրապարակայնությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 8–ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի 2022-2027թթ. ՌԾ-ի 10-րդ հիմնախնդիրը վերաբերում է սոցիալական գործընկերության ցանցի զարգացմանը, գործատուների հետ համագործակցության շրջանակների ընդլայնմանը: Հարկ է նշել, որ 2023թ. մշակվել է «Արտաքին կապերի և միջազգային համագործակցության քաղաքականություն»: Քաղաքականության 2-րդ կետով սահմանված են արտաքին կապերի և միջազգային համագործակցության ոլորտում քոլեջի հիմնական նպատակները, օրինակ՝ տարածաշրջանում քոլեջի գործունեության տեսանելիության բարձրացում, միջազգային և հայաստանյան կրթական ծրագրերի ինտեգրում, ուսանողների, դասախոսական կազմի շարժունության ապահովում և այլն: Քոլեջն իր գլխավոր ռազմավարական ուղղություններից է համարում արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումն ու ընդլայնումը, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գործարար և հանրային կառույցների հետ համագործակցությունների հաստատումը: Արտաքին կապերը և միջազգայնացման գործընթացները քոլեջում համակարգում է տնօրենը, որակի պատասխանատուն, կարիերայի կենտրոնը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարածաշրջանի բուժհաստատությունների և կազմակերպությունների հետ քոլեջը ձևավորել է կայուն համագործակցային միջավայր՝ գործնական պարապմունքներն ու պրակտիկաները նրանց բազաներում կազմակերպելու համար: Մասնավորապես՝ Գյումրի ԲԿ, Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա, Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա, ստոմկլինիկաներ և այլն: Վերջին 2 տարիներին գործընկերային համագործակցություններն ընդլայնվել են՝ համագործակցության պայմանագրեր են կնքվել Նատալի Ֆարմ, Նովա Ֆարմ, Ժաննա Ֆարմ, Իտալական պոլիկլինիկա, «Ավանտա» կոսմետոլոգիական կենտրոնի, «Ինթրա» հոգեբանական ակումբի հետ և այլն: «Կաթիլ» հիմնադրամի հետ համագործակցում են վարպետաց դասերի կազմակերպման շրջանակում, ինչպես օրինակ տեղի է ունեցել շաքարային դիաբետին նվիրված վարպետության դաս: 2021թ. «Action Sante Femmes» ֆրանսիական ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակում քոլեջի «Մանկաբարձական գործ» մասնագիտությամբ ուսանողները մասնակցում են «Գինեկոլոգիա և մանկաբարձություն» թեմայով ամենամսյա դասընթացին, որոնք իրականացնում են ասոցիացիայի կողմից գործուղված ֆրանսիացի կամավոր մանկաբարձներ և մանկաբարձ-գինեկոլոգներ: Պարապմունքների արդյունքում ուսանողներն ամրապնդում և խորացնում են մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաև ծանոթանում են Ֆրանսիայի մանկաբարձական դպրոցի առանձնահատկություններին: Նշյալ դասընթացի ավարտին ուսանողներին տրվում են վկայականներ: Քոլեջի նոր համագործակցություններից է նաև «Հայկական Կարիտաս» Բարեսիրական ՀԿ-ի հետ համագործակցությունը, որի շրջանակում «Քույրական գործ» մասնագիտության ուսանողները մասնակցում են «Հայկական Կարիտաս» Բարեսիրական ՀԿ-ի կողմից կազմակերպվող «Միայնակ ծերերի խնամք» մոդուլի 19 ժամյա լրացուցիչ դասընթացին:

Դասընթացը նպատակ ունի խորացնել և ամրապնդել «Քույրական գործը հերատրիայում» առարկայից ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները: Դասընթացի ավարտին ուսանողներին տրվում են վկայականներ: 2022թ. Գյումրու շտապօգնության կայանի հետ համագործակցությունը հնարավորություն է տվել «Քույրական գործ» մասնագիտության թվով 10 ուսանողների իրենց նախաավարտական պրակտիկան անցկացնել շտապօգնության կայանում, բրիգադների հետ մեկնել կանչերի: Պրակտիկայի ավարտից հետո տվյալ գործատուի մոտ 6 շրջանավարտներ անմիջապես անցել են աշխատանքի: Հարկ է ընդգծել, որ քոլեջը կարևորում է նաև շրջանավարտների հետ գործընկերային համագործակցությունը, ինչպես օրինակ Հայկական բժշկական ինստիտուտի ուսանողը (քոլեջի շրջանավարտ) անցկացրել է սեմինար «Սրտի տամպոնադա», գործնական դասընթաց՝ «Աղետների ժամանակ առաջին բուժօգնություն» թեմաներով:

Քոլեջը դիմել և շահել է էրազմուս+ ծրագիրը, որը միտված է «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ի ատամնատեխնիկական նոր սերնդի թվային լաբորատորիայի համար հմուտ մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտություններ ձևավորմանը:

Համագործակցության պայմանագրեր են կնքվել նաև Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի, Եվրասիա միջազգային համալսարանի, Երևանի մենեջմենթի համալսարանի, Գյումրու կրթահամալիրի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հետ: Բենչմարքինգի իրականացման փորձ է արվել Երևանի հենակետային բժշկական քոլեջի, Վանաձորի պետական բժշկական քոլեջի, Էրեբունի պետական բժշկական քոլեջի հետ, սակայն համեմատական վերլուծություններ և այդ հիմքով բարելավումներ չեն իրականացվել:

Դրամաշնորհային ծրագրերի մասնակցության և գործատուների կարիքների հիման վրա քոլեջի կողմից կարևորվում է ուսանողների և դասախոսների անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացումը: Քոլեջի ուղղորդմամբ դասախոսներն մասնակցել են «Ամերիկյան անկյուն» բարեգործական կազմակերպության կողմից կազմակերպված անգլերեն անվճար դասընթացների, որոշ դասախոսներ իրենց նախաձեռնությամբ մասնակցել են անգլերերնի այլ վճարովի վերապատրաստումների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ և՛ ուսանողների, և՛ դասախոսների շրջանում դեռևս անհրաժեշտություն կա բարձրացնել անգլերեն և այլ օտար լեզուների իմացության մակարդակը:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն արժևորում է գործընկերության ցանցի զարգացումը և գործատուների հետ համագործակցային և մասնակցային կրթական միջավայրի ձևավորումը, և իր գլխավոր ռազմավարական ուղղություններից է համարում կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գործարար և հանրային կառույցների հետ համագործակցությունների հաստատումը: Արդյունքում, մշակված քաղաքականության նպատակադրումների իրագործումը քոլեջին հնարավորություն կտա բարձրացնել տարածաշրջանում քոլեջի վարկանիշը, մասնագիտական գրավչությունը, իրականացնել միջազգային և հայաստանյան կրթական ծրագրերի ինտեգրում, ապահովել ուսանողների, դասախոսական կազմի շարժունություն:

Խրախուսելի է, որ տարածաշրջանի առաջատար բուժհաստատությունների և կազմակերպությունների հետ քոլեջը ձևավորել է կայուն համագործակցային միջավայր, գործնական պարապմունքներն ու պրակտիկաները իրականացվում են նրանց բազաներում՝ նպաստելով ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Գովելի է, որ վերջին տարիներին քոլեջի գործունեությունը միտված է գործընկերային համագործակցությունների ընդլայնմանը, որի արդյունքում համագործակցային կրթական հարաբերություններ են ձևավորվել տարածաշրջանի բժշկական կազմակերպությունների հետ: Փորձագիտական խումբն առանձնացնում է ֆրանսիական «Action Sante Femmes» ասոցիացիայի և «Հայկական Կարիտաս» Բարեսիրական ՀԿ-ի հետ համագործակցությունները, որոնք հնարավորություն են տվել «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտության ուսանողներին մասնակցել դասընթացների, ամրապնդել և խորացնել մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, ունկնդրել օտարերկրյա մանկաբարձ-գինեկոլոգների, ծանոթանալ այլ երկրների մասնագիտական փորձին: Դասընթացների ավարտին ուսանողներին տրվում են վկայականներ՝ հնարավորություն ընձեռելով աշխատաշուկա մտնել որպես առավել մրցունակ կադր: Հատկանշական է, որ Գյումրու շտապօգնության կայանի հետ համագործակցության շրջանակում իրականացված նախաավարտական պրակտիկայի արդյունքում «Քույրական գործ» մասնագիտության թվով 6 ուսանողներ անմիջապես անցել են աշխատանքի շտապօգնության կայանում: Գնահատելի է, որ քոլեջի գործընկերային համագործակցությունները ներառում են նաև վարպետաց դասերի, սեմինարների, գործնական դասընթացների իրականացում, որի արդյունքում սերտ համագործակցություններ են ձևավորվել քոլեջի շրջանավարտների և այլ կազմակերպությունների հետ՝ նպաստելով մասնակցային կրթական միջավայրի զարգացմանը:

Թեև քոլեջն ունի համագործակցային պայմանագեր տարբեր ուսումնական հաստատությունների հետ, առկա են բենչմարքինքի փորձեր, այդուհանդերձ ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ և այդ հիմքով բարելավումներ չեն իրականացվել:

Դրական է գնահատվում դրամաշնորհային ծրագրերի մասնակցության համար և գործատուների կարիքների հիման վրա ուսանողների և դասախոսների անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացման քոլեջի նպատակադրումը, ինչը հնարավորություն է տվել քոլեջին դիմել և շահել էրազմուս+ ծրագիրը: Սակայն միևնույն ժամանակ հարկ է նշել, որ քոլեջի դասախոսներն ու ուսանողները կարիք ունեն անգլերեն և այլ օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու, ինչը կարող է էապես նպաստել միջազգայնացման համագործակցությունների և դրամաշնորհային ծրագրերի մասնակցության ծավալների ավելացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի գլխավոր ռազմավարական ուղղություններից է կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գործարար և հանրային կառույցների հետ համագործակցությունների հաստատումը, քայլեր են իրականացվում գործընկերության ցանցի զարգացման և գործատուների հետ համագործակցային ու մասնակցային կրթական միջավայրի ձևավորման համար, տարածաշրջանի առաջատար բուժհաստատությունների և կազմակերպությունների հետ քոլեջը ձևավորել է կայուն համագործակցային միջավայր՝ գործնական պարապմունքներն ու պրակտիկաները իրականացնելով նրանց բազաներում, առկա են բազմապրոֆիլ համգործակցություններ, քոլեջը դիմել և շահել էրազմուս+ ծրագիրը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊԲՔ-ն բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

ԳՊԲՔ-ում որակի ապահովման գործընթացները մեկնարկել են 2018թ.-ից, գործել է որակի ապահովման աշխատանքային խումբ, ուր ներգրավված են եղել դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ: 2020թ. սեպտեմբերից նշանակվել է կրթության որակի պատասխանատու, ով համակարգում է նաև որակի ապահովման խմբի աշխատանքները: 2021թ. քոլեջը մշակել է «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որի բաղադրիչներն են՝ որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը, որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը, ուսումնառության գնահատումը և դասավանդման սկզբունքները: Որակի ապահովման աշխատանքները կանոնակարգելու նպատակով քոլեջում մշակվել է «Որակի ապահովման հանձնախմբի կանոնակարգ»-ը, ուր հանձնախմբի առանցքային խնդիրներից են որակի մշակույթի տարածման և բարելավման խթանումը, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանումը, հաշվետվողականության, թափանցիկության ապահովումը և այլն: Կանոնակարգով առանձնացված են որակի հանձնախմբի թվով 16 գործառույթ: Քոլեջը մշակել է նաև «Որակի ապահովման ձեռնարկ», որտեղ հիմնականում արտացոլված են ՈԱ կենտրոնի առաքելությունը, ռազմավարական խնդիրները և այլ հարցեր, ՈԱ գործիքակազմը շեշտադրված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ համակարգը և մշակույթը դեռևս ձևավորման փուլում են: Ներքին շահակիցները, այդ թվում՝ դասախոսներն ու ուսանողները, դեռևս լիարժեք չեն ընկալում իրենց դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում, այսպես օրինակ՝ դասախոսները կարևորում են իրենց առարկայի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը, սակայն հստակ չեն տարանջատում ՈԱ մեխանիզմներն ու իրենց ծրագրերում դրանց կիրառության փորձառություն չունեն: Ինչ վերաբերում է ուսանողներին, ապա նրանք բավարար իրազեկվածություն չունեն որակի ապահովման խմբի աշխատանքներից և էական մասնակցություն չեն ունեցել ՈԱ գործընթացներին:

Որակի պատասխանատուն ունի անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովված աշխատասենյակ: Քոլեջում կրթության որակի պատասխանատուի հաստիքի համար սահմանված է 0,5դրույք, 0,5 դրույքով համատեղում է նաև պրակտիկայի ղեկավարի հաստիքը: ՈԱ պատասխանատուն հանդիսանում է նաև ԿԽ անդամ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուն ծանրաբեռնված է աշխատում:

Քոլեջում իրականացվում են հետևյալ հարցումները՝ «Դասախոսը և առարկան ուսանողի աչքերով», «Ուսանողների բավարարվածությունը ռեսուրսներից», «Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերից», «Ուսանողների բավարարվածությունը գնահատման համակարգից», «Ուսանողների հարցում ատեստավորման գնահատման համակարգից», «Ուսանողների հարցում պետական ամփոփիչ ատեստավորումից», «Ուսանողների հարցում պրակտիկայից», «Ուսանողների բավարարվածությունը ստորաբաժանումների աշխատանքից», իրականացվել են հարցումներ նաև ծնողների, շրջանավարտների շրջանում: Հարցման արդյունքներով վերհանված որոշ խնդիրներ ստացել են լուծումներ, օրինակ՝ ավելացել են պրակտիկայի անցկացման համար դեղատների քանակը, պետական ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվել են ոչ միայն ուսանողների գիտելիքների շեշտադրմամբ, այլ նաև նրանց կարողությունների բացահայտմամբ: Հարկ է նշել, հարցումների

արդյունքներն ամփոփվել են միայն քանակական բաղադրիչով, որակական վերլուծություններ առկա չեն: Բարելավման ենթակա խնդիրները համակարգված չեն, խնդիրների լուծման բաղադրիչները ներդրված չեն հաջորդ տարվա պլանավորումներում:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի կրթական գործընթացներում, սակայն որակի ապահովման գործընթացներում դեռևս բավարար ներգրավվածություն չունեն: Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողները և դասախոսները ներգրավված են քոլեջի որակի ապահովման տարբեր մակարդակներում, որակի ապահովման խմբում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների ներգրավվածությունը որակի ապահոման գործընթացներում նկատելի է միայն հարցումների մասնակցության տեսքով, իսկ արտաքին շահակիցների ընգրկվածությունը որակի ապահովման համակարգում սահմանափակվում է միայն բժիշկ-դասախոսների և գործատուների կարծիքներով, որոնք դեռևս համակարգված և ամփոփված չեն:

Որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը դեռևս չի ավարտվել: Քոլեջն իրականացրել է որոշ բարելավումներ, օրինակ՝ ռեսուրսների բարելավում, ՄԿԾ-ների բարելավում, սակայն դրանց հիմքում դրված չեն հավաքագրված և վերլուծված տվյալներ, չեն գնահատվել նաև բարելավման արդյունքները: ՈԱ գործընթացների գնահատման վերաբերյալ դեռևս առկա չեն համապատասխան վերլուծություններ: Սահմանված չեն նաև գործունեության արդյունավետության առանցքային ցուցիչները, որոնց միջոցով կգնահատվեին կատարված գործողություններն ու դրանց արդյունքները:

Քոլեջն արտաքին գնահատման և ինաքնավերլուծության իրականացման նպատակով ձևավորել է աշխատանքային խումբ, որտեղ ներգրավվել են տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ, դասախոսներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները ներգրավված չեն եղել այդ աշխատանքներում, իսկ ՊԴ կազմն ու ուսումնաօժանդակ կազմը հստակ չեն պատկերացնում որակի ապահովման մեխանիզմներն և գործիքակազմը:

Տնօրենի, ստորաբաժանումների, ամբիոնների հաշվետվությունները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները, որպես որակի ապահովման ներքին համակարգի գործունեության թափանցիկության հիմք, հիմնականում նկարագրողական բնույթի են, չունեն վերլուծական բաղադրիչ և զետեղված չեն քոլեջի կայքէջում: Քոլեջի կայքէջը գործարկվել է փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում, ուր արդեն իսկ տեղադրված են որոշ փաստաթղթեր:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ՈԱ գործընթացների իրականացման համար ձևավորել է անհրաժեշտ փաստաթղթային հենքը, որոնցում շեշտադրված դրույթների, խնդիրների, գործառույթների ամբողջական կիրառումը կարող են դրականորեն անդրադառնալ քոլեջի ՈԱ գործընթացների արդյունավետ իրականացման համար:

Թեև քոլեջում ստեղծվել է որակի ապահովման խումբ, ուր ընդգրկված են վարչատնտեսական աշխատողներ, դասախոսներ, ուսանողներ և որ որակի մշակույթի տարածման և բարելավման խթանումը խմբի առանցքային խնդիրներից են, այդուհանդերձ որակի ապահովման մշակույթը դեռևս ձևավորման փուլում է՝ խոչընդոտելով ՈԱ գործընթացների արդյունավետ իրականացումը: Անհանգստացնող է, որ ուսանողները բավարար իրազեկվածություն չունեն քոլեջում գործող որակի ապահովման խմբի աշխատանքներից և էական մասնակցություն չեն ունեցել ՈԱ գործընթացներին, ինչը նույնպես խոչընդոտում է ՈԱ մշակույթի տարածմանը: Ի հավելումն՝ ներքին շահակիցները լիարժեքորեն չեն ընկալում իրենց դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում և

հստակ չեն տարանջատում ՈԱ մեխանիզմները՝ չունենալով դրանց կիրառության փորձառություն: Արդյունքում վտանգվում է ՈԱ մշակույթի տարածումն ու զարգացումը:

Թեև քոլեջն իրականացրել է որոշ բարելավումներ, սակայն ՊԻԳԲ շրջափուլը դեռևս չի ավարտվել: Մտահոգիչ է, որ իրականացված բարելավումների հիմքում դրված չեն հավաքագրված և վերլուծված տվյալներ, բարելավման արդյունքները գնահատված չեն: Բացի այդ, սահմանված չեն գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցիչները, ինչը դժվարեցնում է կատարված գործընթացների արդյունավետության գնայատումը:

Չնայած որ քոլեջը մշակել է «Որակի ապահովման ձեռնարկ», այնուամենայնիվ ձեռնարկում կանոնակարգված չեն ՈԱ գործիքակազմը, ՈԱ մշակույթի տարածման մեխանիզմները: Փորձագիտական խումբը գտնում է, որ նշյալ գործիքների, մեխանիզմների կանոնակարգումն ու կիրառումը կօժանդակեն քոլեջում ՈԱ գործընթացների լավարկմանն ու որակի ապահովման համակարգի կայացմանն ու որակի մշակույթի տարածմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈԱ պատասխանատուի ջանքերը քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման և որակի մշակույթի ձևավորման գործում, սակայն միևնույն ժամանակ ռիսկային գործոն է ՈԱ պատասխանատուի գերբեռնվածությունը, ինչը կարող է հանգեցնել ՈԱ գործընթացների ոչ լիարժեք իրականացմանը: Բացի այդ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՈԱ պատասխանատուի միաժամանակյա մի քանի հաստիքների զբաղեցումը կարող է շահերի բախում առաջանցնել՝ գործընթացների իրականացման և արդյունավետության գնահատման տեսանկյունից:

Թեև քոլեջում ներդրվել է հարցումների իրականցման գործընթացը, որոնց միջոցով վեր են հանվում ներքին և արտաքին շահակիցների կարիքները, որոշ խնդիրներ լուծումներ ստանում, այդուհանդերձ հարցումները չունեն որակական վերլուծությունների ամփոփումներ, բարելավման ենթակա խնդիրները համակարգված չեն, բարելավումների հիմքում դրված չեն հավաքագրված տվյալները, առաջնահերթությունները, խնդիրների լուծման բաղադրիչները ներդրված չեն հաջորդ տարվա պլանավորումներում: Փորձագիտական խումբը գտնում է, որ վերոնշյալը կարող է նպաստել նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների հիմքով որոշումների կայացմանը:
Փորձագիտական խմբի դիտարկմամբ ՈԱ գործընթացների մասին տեղեկատվության տարածումը կայքէջով հնարավորություն կտա բարձրացնել քոլեջի ճանաչելիությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ՈԱ համակարգը դեռևս ձևավորման փուլում է, ՈԱ մշակույթի տարածման մեխանիզմները արդյունավետորեն չեն գործարկվում, ներքին շահակիցները դեռևս լիարժեքորեն չեն ընկալում իրենց դերակատարությունը որակի ապահովման գործընթացներում, իրականացված հարցումները չունեն որակական վերլուծություններով ամփոփումներ, ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ավարտված չէ, բարելավումների հիմքում դրված չեն հավաքագրված տվյալները, խնդիրների լուծման բաղադրիչները ներդրված չեն հաջորդ տարվա պլանավորումներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊԲՔ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է անբավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

01 դեկտեմբերի 2023 թ.

Արմենուհի Մհերյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան- 2000թ. ավարտել է ԵրՊՏԻ-ի (ներկայումս՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) Ֆինանսահաշվային ֆակուլտետի «ֆինանսներ և վարկ» բաժինը, 2002-2004թթ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թթ. աշխատել է ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.- ից աշխատում է Հայաստանի Եվրոպական համալսարանում որպես «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս, 2023թ.-ից՝ Հայստանի Եվրոպական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ:

Աննա Սուքիասյան - 2001թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Կենսաբանական ֆակուլտետի «Մանրէաբանության և կենսատեխոլոգիայի» ամբիոնը, 2003թ. ստացել է մագիստրոսի որակավորում ԵՊՀ-ի Կենսաբանության ֆակուլտետի նույն ամբիոնում: 2012թ. շնորհվել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2015թ. ստացել է դոցենտի կոչում: 2014թ. իրականացրել է հետդոկտորական աշխատանք Մանրէաբանության և հիգիենայի ինստիտուտում, ԳԴ Բեռլինի «Շարիտե» բժշկական կենտրոնում, 2015-2017թթ. իրականացրել է հետդոկտորական աշխատանք Մոլեկուլային կենսատեխնոլոգիայի և ֆունկցիոնալ գենոմիկայի ամբիոնում, ԳԴ Վիլդաուի տեխնիկական համալսարանում: 2020 թ.-ից առ այսօր աշխատում է Եվրասիա միջազգային համալսարանում որպես դոցենտ, 2021 թ.-ից մինչ այժմ ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան Կենսաքիմիայի ինստիտուտում որպես Նեյրոհորմոնների կենսաքիմիայի բաժնի գիտաշխատող, 2023 թ.-ից այռ այսօր «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան: Շուրջ 11 գիտական հոդվածների և ուսումնական ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

Իզաբելլա Միրզոյան - 1988 թ. ավարտել է Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանը: 1989-1995թթ. աշխատել է տարբեր պոլիկլինիկաներում որպես թերապևտ, 2000–2008 թթ.՝ Հայաստանում Ամերիկյան Համալսարանում որպես տվյալների հավաքագրման և մշակման մասնագետ: 2008- ից առ այսօր աշխատում է Հայկական բժշկական ինստիտուտում որպես «Ներքին հիվանդությունների» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների. 2010–2011 թթ. Ազգային առողջապահության ինստիտուտում՝ Ընտանեկան բժշկության մասնագիտացում: Գիտական հոդվածների համահեղինակ է:

Արեգ Խալափյան-2021 թվականից սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջ՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՌԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Գյումրու պետական բժշկական քոլեջի հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

25.09.2023թ.-28.09.2023թ.

	24.09.2023	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Ռեսուրսների դիտարկում	14:30	16:00	90 րոպե

	25.09.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	11:50	12:35	45 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	12:45	13:45	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	15:00	15:50	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:00	16:50	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակհանդիպում	17:00	18:00	60 րոպե

	26.09.2023թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Դասալսումներ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:10	15:10	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի պատասխանատու, կադրերի տեսուչ, լաբորանտներ, պրակտիկայի ղեկավար, մեթոդիստ, գրադարանավար, հաշվապահ, տնօրենի օգնական)	15:20	16:20	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	27.09.2023թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողութ.
1.	Հանդիպում «Քույրական գործ» և «Մանկաբարձություն» կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	09:30	10:40	70 րոպե
2.	Հանդիպում «Քույրական գործ» և «Մանկաբարձություն» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	10:55	11:55	60 րոպե
3.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ		12:05	12:50	45 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:00	14:00	60 րոպե
5.	Ռեսուրսների դիտարկում, այց բուժհաստատություններ		14:30	16:00	90 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում		16:30	18:30	120 րոպե

	28.09.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում	10:40	11:10	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:40	15:00	80 րոպե
6.	Հանդիպում ղեկավար կազմի հետ	15:00	15:20	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վեր հանման արձանագրություններ, վերլուծություններ (որոնք տեղ են գտել նոր ՌԾ-ում)	1
2.	Նեքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների հարցաշարեր	1
3.	Նախորդ ՌԾ-ի գնահատումներ, ամփոփումներ	1
4.	Տնօրենի տարեկան հաշվետվություններ՝ վերջին 5 տարվա կտրվածքով	1
5.	ՌԾ-ի կատարման վերահսկողության հաշվետվություններ, ՌԾ գործողությունների պլանի վերլուծություններ	1
6.	ՈՒսումն.մեթ. և Գիտամեթ. խորհուրդների արձանագրություններ	2
7.	Եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը վերջին 3 տարիների կտրվածքով	2
8.	Ֆինանսների տնօրինման քաղաքականություն	2
9.	ԿԽ, ՄԽ, ՈՒսումնամեթ.խորհրդի արձանագրություններ	2
10.	2021-2022թթ. տնօրենի տարեկան աշխատանքային պլաններ,	2
11.	կրթական գործունեության վրա ազդող գործոնների վերլուծություններ	2
12.	Պայմանագրեր պրակտիկաների բազաների հետ	3
13.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ ըստ տարբեր մասնագիտությունների /վերջին 3 տարիների կտրվածքով/	3
14.	Նոր մշակված մեթոդական ուղեցույց	3
15.	Պետական ամփոփիչ ատեստավորումից ուսանողների բավարարվածության վերլուծություն 2020թ., 2022.թ, 2023թ.,	3
16.	Պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն 2020-2021, 2022-2023	3
17.	Մշտադիտարկումների փաթեթներ	3
18.	Դասալսումների վերլուծություններ	3
19.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ ըստ տարբեր մասնագիտությունների /վերջին 3 տարիների կտրվածքով/	3
20.	Ուսանողներին տրամադրվող ընթացիկ և ամփոփիչ առաջադրանքներ	3
21.	Ուսանողներին ներկայացվող վերլուծական, ինքնուրույն, հետազոտական աշխատանքներ	3
22.	Դասացուցակ	3
23.	Ուսանողներին տրամադրվող Լրացուցիչ խորհրդատվությունների ժամանակացույց	4

24.	Շրջանավարտների զբաղվածության բազա (վերջին 3 տարիների)	4
25.	Ուսումնական մասի, ամբիոնի,դասախոսական կազմի մասնագիտական գործունեության վարկանիշային գնահատման կարգ	5
26.	ՈԱ պատասխանատուի վերլուծությունները դասախոսների գնահատման հետ կապված	5
27.	Վերապատրաստված դասախոսներ ցանկ՝ վերջին 3 տարիների կտրվածքով	5
28.	Դասախոսների հրատարակումների ցանկը	6
29.	2022-23թթ. Ֆինանսական հաշվետվություններ	7
30.	Քոլեջի ունեցած պայմանագրերը, հուշագրերը գործատուների, բուհերի, քոլեջների և այլ կազմակերպությունների հետ	9
31.	ՈԱ պատասխանատուի կողմից իրականացված բոլոր հարցումները և վերլուծությունները	10
32.	ՈԱ պատասխանատուի աշխատանքային պլանները և հաշվետվությունները	10
33.	Հիվանդների տնային խնամքին ուսուցման պլան/ թեմաներ <<Հայկական Կարիտաս>>	4,9
34.	Գինեկոլոգների և մանկաբարձների <<Հանուն կանանց առողջության>> ֆրանսիական ասոցացիայի կողմից 2022թ, իրականացված դասախոսությունների ցանկ,	5,9
35.	ՈԻսանողների հետազոտություն(դեղագործություն)	4,6
36.	Հիվանդի պատմության քույրական քարտ (ուսանողների գործնական աշխատանք)	4,3
37.	Եկամուտների ու ծախսերի վերլուծություն	7
38.	Դասախոսը և առարկան ուսանողի աչքերով	10,4
39.	Հիմնական կրթությամբ խմբերի միջանկյալ ատեստավորման կոնսուլտացիաների օրերի ժամանակացույց	4
40.	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն	7
41.	Էրազմուսի ծրագրին դիմելու փաթեթ	9
42.	Լաբորատորիաների ցանկ	7
43.	Ռեֆերատներ տարբեր մասնագիտություններում	3
44.	Վերապատրաստված սկսնակ դասախոսների ցանկ	5
45.	Ուսումնական պլաններ և առարկայական/այդ թվում մոդուլային/ ծրագրեր	3
46.	Պրակտիկայի օրագրեր	3
47.	Ամփոփիչ ատեստավորման հարցաշարեր	3

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լեզուների կաբինետ
2. Համակարգչային կաբինետ
3. Համակրգչային առարկաների կաբինետ
4. Քիմիայի կաբինետ-
5. Մանրէաբանության լաբորատորիա-լսարան
6. ՆԶՊ
7. Հասարակագիտական առարկաների լաբորատորիա
8. Ատամնատեխնիկական գործի լաբորատորիա
9. Անատոմիայի կաբինետ
10. Մարդու անատոմիայի, ֆիզիոլագիայի և պաթոլոգիայի լաբորատորիա
11. Բուսաբանության, ֆարմակոլոգիայի և դեղաբանության լաբորատորիա
12. Մանկաբարձության և գինեկոլոգիայի կաբինետ
13. Մանկաբուժության կաբինետ
14. Քույրական գործի կազմակերպման կաբինետ
15. Թերապիայի և վերակենդանացման հիմունքների կաբինետ
16. Վիրաբուծության, աղետների բժշկության և առաջին օգնության կաբինետ:

Կլինիկական բազաներ

1. Գյումրու բժշկական կենտրոն
2. «Սուրբ Գ. Նարեկացու» անվան պոլիկլինիկա
3. Գյումրու բժշկական կենտրոնի ծննդատուն
4. «Ժաննա Ֆարմ» դեղատուն

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԳՊԲՔ- Գյումրու պետական բժշկական քոլեջ
ՈԱԿ- ներքին որակի ապահովման կեհտրոն
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ԳԱՑ- գնահատման առանցքային ցուցիչների
ՈԱ- որակի ապահովում
ԻՎ- ինքնավերլուծություն
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈՒՕ- ուսումնաօժանդակ
ՊԻԳԲ – պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
ԿԽ-կառավարման խորհուրդ
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
TBL- համագործակցային/թիմային ուսուցում
PBL- խնդրակենտրոն ուսուցում
RBL - արդյունքահեն ուսուցում